# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

32ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 12 (1562) ՇԱԲԱԹ, ԱՊՐԻԼ 7, 2012
VOLUME 32, NO. 12 (1562) SATURDAY, APRIL 7, 2012

*Պաշտօնաթերթ՝ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի*

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

## ՄԱՀՈՒԱՆ ԽԱՅԹՈՑԷՆ ՁԵՐԾ ՄՆԱՑ ԱԶԳԻՍ ՅԱՒԵՐԺՈՒԹԻՒՆԸ

***ՏՕՔԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ***

Սուրբ Յարութեան հրաշափառ տօնական այս օրերուն, ինչպէս միշտ, այսօր երկու հազար տարիներէ ի վեր, հայ հաւատացեալ ժողովուրդը, խոր հաւատքով եւ երախտապարտ ոգիով կը փառաւորէ Քրիստոսի յաղթանակը՝ մահուան վրայ: Հայաստանեայց Առաքելական թէ՝ Կաթողիկէ, կամ՝ Աւետարանական, հայ ազգի ամբողջական եկեղեցին, անսովոր պերճութեամբ պատարագ կը բարձրացնէ խաչեալ եւ թաղեալ Քրիստոսի Սրբ. Յարութիւնը փառաւորելու համար: Հայ հաւատացեալ ընտանիքներ, աշխարհի որ ծագերուն ալ գտնուելու ըլլան, անխտիր, իրենց օճախներէն ներս ջերմեռանդօրէն կը տօնախմբեն օրուան խորհուրդը, որ սրբազան առիթ կը դառնայ լայնօրէն խոկալու Աստուածորդիի մեռելներէն յարութիւն առած ըլլալու անժխտելի իրողութեան վրայ:

Հայ ժողովուրդը բազմաթիւ պատճառներ ունի անբեկանելի հաւատքով եւ անմնացորդ երախտագիտութեամբ տօնախմբելու Քրիստոսի Յարութիւնը, այն իմաստով, որ հաւատքը եղած է միշտ իր հոգեմտաւոր վերականգնումին եւ ֆիզիքական գոյութեան պահպանման ներշնչման եւ ուժաւորող կենսաղբիւրը, այն օրէն ասդին երբ ընդունեց Լուսաւորչի հաւատամքը:

Քրիստոսի Յարութեան հրաշափառ յաղթանակը մահուան վրայ՝ վանեց իր մէջէն ամէն վախ, յուսահատութիւն, անորոշութիւն ու կասկածամտութիւն՝ ինչ կը վերաբերի իր հաւատքի անպարտելիութեան: Զօրացուց իր մէջ իր դիմադրականութիւնը կեանքի դժուարութիւններու հանդէպ: Առաւել եւս, առաւելագոյնս իմաստաւորեց իր գոյութեան յաւերժութիւնն ու ստեղծագործական շնորհքներուն պտղաբերումը:

Մինչ աշխարհակալ տէրութիւններ գոյութիւն չունին այսօր աշխարհի երեսին, անոնց ենթակայ, աշխարհով մէկ տկար, լքուած եւ անպաշտպան հայն ու իր հայրենիքը, կան ու կ'ապրին մշակութապէս ստեղծագործ, գիտականօրէն բարգաւաճ եւ քաղաքականօրէն յառաջընթաց կեանք, որ զարմանք ու հիացմունք կը պատճառէ ու կը շարունակէ պատճառել միշտ, աշխարհով մէկ յառաջադէմ մարդկութեան: Անիկա հաւատքի ուժն էր, որ ներշնչեց, ոգեւորեց, զօրացուց ու առաջնորդեց զինք դէպի ստեղծագործ իմաստութիւն, որ իրեն շնորհեց Մեսրոպեան Ա, Բ,

*Շար.ը էջ 18*

## ԸՆՏՐԱՑՈՒՑԱԿՆԵՐՈՒ ՀԱՐՑԸ ԿԱՍԿԱԾԻ ՏԱԿ ԿԸ ԴՆԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ




*Հայ քաղաքացին ընտրացուցակի առջեւ*

*Մայիս 6-ին տեղի ունենալիք Հայաստանի խորհրդարանական ընտրութիւններու առթիւ հրապարակուած ընտրացուցակներու հարցը, մտահոգութեան առիթ դարձած է ոչ միայն ընդդիմադիր քաղաքական շրջանակներու մօտ, այլ նաեւ ամբողջ հասարակութիւնը սկսած է կասկածի մատնել, իշխանութիւններուն կողմէ տրուած խոստումները՝ ազատ ու արդար ընտրութիւններ կազմակերպելով կապակցութեամբ:*

*Արդարեւ, պաշտօնական տուեալներու համաձայն, Հայաստանի բնակչութիւնը իջած է 2.800.000-ի, իսկ ընտրողներու թիւ, համեմատած 2008-ի նախագահական ընտրութիւններուն հետ, աւելցած է 186 հազարով, հասնելով 2.485.844-ի:*

*Ընդդիմադիր կուսակցութիւնները կ'ահազանգեն ընտրացուցակներու վրայ եղող լուրջ անճշդութիւններու մասին, որոնք մեծ կարելիութիւն կրնան տալ, յառաջիկայ ընտրութիւններու խախտման համար:*

*Ընտրողներու թիւի նման աճը, շատերու կարծիքով, անհաւատալի է, երբ նկատի առնուի վերջին տարիներուն արձանագրուած արտագաղթը ու նախորդ տարի կազմակերպուած մարդահամարի նախնական տուեալները, ըստ որոնց, Հայաստանի մէջ կ'ապրի մօտ 2.800.000 քաղաքացի:*

*Շար.ը էջ 4*

## ԲԻՒՐ ՅԱՐԳԱՆՔ ԱՆԺԷԼ ՃԵՐԷՃԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

***ՏՕՔԹ Ա. ՎԱՆԱՏՈՒՐ***

*Մահուան քօղը ծածկեց եւ իր բազմաբնոյթ վաստակին ու աստուածապարգեւ խոր ծերութեանը ծանրութեան տակ սպառած երախտաշատ հայուհիի մը անշնչացած մարմինը: Ան ուրիշ մէկը չէր, եթէ ոչ՝ իր ընտանեկան, ընկերական եւ ծանօթ շրջանակներու կողմէ սիրուած եւ յարգուած Անժէլ Ճերէճեանը, որ երկարած է այս պահուն բոլորիս դիմաց գտնուող այս հոգեխռով դագաղի ցուրտ պարունակին մէջ, աւելի քան ինը տասնամեակ հայօրէն արժեցուցած իր կեանքի տարիներուն գոհունակութիւնը դալկացած դէմքին վրայ:*

*1918-ի Հայաստանի առաջին հանրապետութեան Իրաքի երբեմնի Ընդհանուր Հիւպատոս, յետագային, Հիւսիսային Սուրիոյ Հալէպ քաղաքի Կիլիկեան ճեմարանի տնօրէն եւ ապա, Լիբանան՝ «Արարատ» օրաթերթի բազմամեայ խմբագիր՝ Արսէն Կիտուր եւ Զարուհի ամոլները կը բախտաւորուին երկու մանչ՝ Սուրէն եւ Ալպերթ եւ երկու դուստրերով՝ Անժէլ եւ Ատրինէ: Կիտուրեան ամոլին անդրանիկ զաւակը Անժէլ՝ կը ծնի 1921-ին, Իրաք, ուր ան իր նախնական ուսումը կը ստանայ Ազգային Թարգմանչաց վարժարանին մէջ: Անժէլ իր փոքր տարիքին կը կորսնցնէ իր մայրը:*

*Հայրը՝ Արսէն Կիտուր, քաղաքական վերիվայրումներու բերումով կ'աքսորուի Հիւսիսային Սուրիա, Հալէպ: Որբացած Անժէլ, իր քրոջ եւ եղբայրներուն հետ կը մնայ Իրաք, իր մեծ մօր խնամքին տակ մօտ ութը ամիս, որմէ անմիջապէս ետք բոլորով, կը միանայ իր հօր, Հալէպ, ուր ան տնօրէնութեան պաշտօնին հրաւիրուած էր Կիլիկեան ճեմարանէն ներս: Հալէպի մէջ, Անժէլ կը շարունակէ իր ուսումը յաճախելով արաբական երկրորդական վարժարան մը, ուր կը տիրապետէ արաբերէն լեզուին եւ յաջողապէս ձեռք կը թողու արաբական պաքալորիան:*

*Անժէլ Կիտուր, 1943 թուին, կ'ամուսնանայ Պէյրութ-կուսակցական առաքելութեամբ յաճախակի Հալէպ այցելութիւններ տուող լիբանանահայ հասարակական ծանօթ Հնչակեան հեղինակութիւն՝ Յարութիւն Ճերէճեանի (Կուժունիի) հետ:*

*Յարութիւն Կուժունի եւ Ան-*

*Շար.ը էջ 19*

## ԱԼԻԵՒ ՀԱՅԵՐԸ ԱՆՈՒԱՆԱԾ Է «ՖԱՇԻՍՏՆԵՐ»

*Պաքուի մէջ տեղի ունեցած Արեւելեան գործընկերութեան «Եւրոնեսթ» խորհրդարանական վեհաժողովի լիագումար նիստին ուղերձ յղելով Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւ հայերը անուանած է «ֆաշիստներ»:*

*Ժողովին ներկայ եղող Հայկական պատուիրակութեան անդամ Նայիրա Զոհրապեան տեղեկացուց որ, մօտաւորապէս մէկ ժամանոց իր ելոյթի մեծ մասը Իլհամ Ալիեւ նուիրած է Լեռնային Ղարաբաղին եւ նոյնիսկ ներկայացուցած է անոր ստուգաբանութիւնը:*

*«Ատրպէյճանի նախագահը կրկին խօսեց իրենց մշտական, միջազգային հարթակներում բարձրաձայնուող էապէս թեմաներից՝ «քսան տոկոս գրաւեալ տարածքներ», «էթնիկ զտումներ», եւ ոչ միայն իրենց ողջ քարոզչական այդ փաթեթը մէկ անգամ եւս վերարտադրեց, այլեւ, ուղղակիօրէն խախտելով էթիկայի բոլոր նորմերը, վիրաւորանքներ հնչեցրեց Հայաստանի ներկայացուցիչների ու Հայաստանի հասցէին՝ անուանելով հայկական կողմին՝ «ֆաշիստներ», որոնք պղծել են իրենց պապերի գերեզմանները»,- պատմեց Նայիրա Զոհրապեան:*

*Հայաստանեան պատուիրակութեան անդամները անմիջապէս արձագանգած են Ատրպէյճանի նախագահի ելոյթին, պատրաստելով բաց նամակ, որ Զոհրապեան Միլլի Մէճլիսի նիստերու դահլիճին մէջ բաժնած է Եւրոպական խորհրդարանի եւ Արեւելեան գործընկերութեան անդամ երկիրներու ներկայացուցիչներուն:*

*«Եւ հիմա այստեղ Իլհամ Ալիեւի ելոյթը հաստատեց մեր այն մտահոգութիւնը, թէ ինչու չէր կարելի այստեղ անցկացնել նիստը»,- ըսուած է հայկական պատուիրակութեան նամակին մէջ, ուր նաեւ «Եւրոնեսթի» ղեկավարութեան կոչ կ'ուղղուի շատ մանրակրկիտ եւ հետեւողական ըլլալու այն որոշումներուն ընդունման հարցով, թէ ուր կրնան իրականացուիլ կազմակերպութեան նիստերը:*

*Հայկական պատուիրակութիւնը նաեւ կը պահանջէ, որ այս կառոյցին կողմէ ամպիոն չտրամադրուի այն գործիչներուն, որոնք իրենց ելոյթներուն մէջ կը քարոզեն բռնութիւն եւ ատարատեացութիւն:*

## ՇՆՈՐՀԱՒՈՐ Ս. ԶԱՏԻԿ

Սուրբ Յարութեան տօնին առիթով «Մասիս» շաբաթաթերթը ջերմօրէն կը շնորհաւորէ իր ընթերցողներուն եւ համայն հայութեան Ս. Զատիկը:

# ԿԱՆԻ՞ ԿՈՆԳՐԵՍՆ ԱՅԴ ԺԵՍՏԸ

**ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ**

*Ժառանգութեան եւ Ազատ Դեմոկրատներ կուսակցութիւնների համամասնական ընտրացուցակում ընդգրկուած Կարապետ Ռուբինեանը յայտարարել է, որ թիւ 7 ընտրատարածքում Րաֆֆի Յովհաննիսեանի թեկնածութիւնը հանելուց յետոյ Հայ Ազգային Կոնգրէսը կարող է պատասխան ժեստ անել: Ռուբինեանը կոնկրետ ասել է, որ Կոնգրէսը թիւ 4 ընտրատարածքում կարող է հանել Արամ Մանուկեանի թեկնածութիւնը: Թիւ 4-ում Ժառանգութիւնից առաջադրուած է Զարուհի Փոստանջեանը:*

*Կանի՞ արդեօք Կոնգրէսը այդ քայլը: Կը հանի՞ արդեօք Արամ Մանուկեանն իր թեկնածութիւնը:*

*Թիւ 7 ընտրատարածքում, որտեղ առաջադրուել էր Րաֆֆի Յովհաննիսեանը, նրանից րոպէներ առաջ առաջադրուել էր նաեւ Նիկոլ Փաշինեանը: Այդ ընտրատարածքի իշխանութեան թեկնածուն օլիգարխ Սամուէլ Ալեքսանեանն է:*

*Րաֆֆի Յովհաննիսեանի առաջադրումը բաւական աղմուկ առաջացրեց եւ արժանացաւ Կոնգրէսի ու նրա համակիրների մեղադրանքին եւ քննադատութեանը: Յովհաննիսեանը յայտարարեց, թէ տեղեակ չէր Նիկոլի առաջադրումից, իսկ յետոյ հանեց իր թեկնածութիւնը: Նա միաժամանակ առաջարկեց, որ ընդդիմութիւնը կը քննարկի բոլոր մեծամասնական ընտրատարածքներում համատեղ մէկական թեկնածու թողնելու հարցը:*

*Բայց, Հայ Ազգային Կոնգրէսը մերժեց, ասելով, թէ Ժառանգութիւնը մատնանշում է կոնկրետ ընտրատարածքներ եւ պահանջում, որ այդ բոլոր ընտրատարածքներում՝ ընդ որում Երեւանում, Կոնգրէսը հանի իր թեկնածուներին յօգուտ Ժառանգութեան թեկնածուների:*

*Եթէ եղել է Ժառանգութեան այդպիսի պայման, ապա դա իսկապէս անընդունելի է, որովհետեւ ոչ միայն հայ-թրքական յարաբերութիւնը, այլ նաեւ ներընդդիմադիր բանակցութիւնը պէտք լինի առանց նախապայմանի:*

*Բայց, հիմա թերեւս այդ ամէնն այնքան էլ էական չէ, եթէ նշում է, որ պատասխան քայլ սպասում են կոնկրետ մէկ՝ տուեալ դէպքում թիւ 4 ընտրատարածքում: Հետեւաբար, եթէ նոյնիսկ եղել է պայման, ապա այժմ՝ երբ Ժառանգութեան համատեղ ցուցակում ընդգրկուած գործիչը կուսակցութեան փոխնախագահի Ռուբէն Յակոբեանի ներկայութեամբ խօսում է կոնկրետ մէկ ընտրատարածքում ժեստի տարբերակի մասին, կարծես թէ Ժառանգութիւնը հրաժարւում է դրանից եւ ընդամէնը այսպես ասած մէկը-մէկի դիմաց գիջում ակնկալում:*

*Կը գնա՞յ արդեօք Կոնգրէսն այդ քայլին:*

*Գնալու դէպքում, հնարաւոր է գուցէ այդպէս քայլ առ քայլ «մաքրել» բոլոր ընտրատարածքները եւ թողնել մէկական թեկնածուներ: Եթէ Ժառանգութիւնը մտածում է այդ տարբերակի մասին, ապա դա ողջունելի է: Այսինքն, եթէ թիւ 4-ից յետոյ Ժառանգութիւնը էլի մի ընտրատարածքում թեկնածութիւն կը հանի, յետոյ սպասելով Կոնգրէսի նոր պատասխանին, ապա այդ գործընթացի արդիւնքը կարող է աւելի հանրօգուտ լինել, քան ընդհանրապէս ոչինչ չանելն ու նոյն ընտրատարածքում փաստացի նաեւ իրար դէմ թեկնածուներ ունենալը:*

*Ընդ որում, չատ դժուար է պատկերացնել, թէ ինչ հիմքով կը մերժի Կոնգրէսը Ժառանգութեան այդ մօտեցումը, կամ առնուազն դրա նշոյլներ պարունակող առաջարկը թիւ 4-ի կապակցութեամբ: Հազիւ թէ ռացիոնալ է մտածել, թէ Արամ Մանուկեանն աւելի ուժեղ թեկնածու է, քան Զարուհի Փոստանջեանը:*

*Բացի այդ, Կոնգրէսն ի հարկէ կարող է ունենալ չափման իր միաւորը, առաւել եւս, որ դժուար է թեկնածուների ռեսուրսները մաթեմատիկական բանաձեւերով չափելը: Բայց, չէ որ թիւ 7-ում էլ Ժառանգութիւնը կարող էր իր չափումներով համարել, որ Րաֆֆին աւելի անցողիկ է, քան Նիկոլը: Առարկելը գրեթէ նոյնքան աւելորդ կը լինի, որքան օրինակ առարկելը, որ Արամ Մանուկեանը Փոստանջեանից աւելի անցողիկ թեկնածու է:*

*Բացի այդ, գլխաւոր խնդիրն այստեղ իհարկէ գործընթացն է, որ կարող է բերել ընդդիմութեան ռեսուրսի առաւել արդիւնաւէտ կիրառմանը: Այժմ, չատ բան կախուած է Կոնգրէսի արձագանքից: Հնարաւոր է, որ Կոնգրէսը փորձի բաւական հիմնաւոր բացատրել, որ այդ մօտեցումը համարում է աւելորդ եւ ընտրութեան է գնում իր թեկնածուներով:*

*Այդ դէպքում, նախ առնուազն տարօրինակ կը լինի այն աղմուկը, որ բարձրացել էր Րաֆֆի Յովհաննիսեանի առաջադրման կապակցութեամբ, եւ բացի այդ էլ Կոնգրէսը փաստացի ինքն իրեն կը դնի ամբողջ ընդդիմադիր դաշտի համար պատասխանատուութեան բեռի տակ, ու տարբեր տարիներին հանրահաւաքների ընթացքում հնչած յայտարարութիւններն արդէն փոքր ինչ տարօրինակ կ՚ընկալուեն:*

*Օրինակ, եթէ Կոնգրեսը չփորձի ընդդիմադիր ռեսուրսի առաւել արդիւնաւէտ օգտագործման համար ամենափոքր առիթի պարագայում իրենից հասանելիք քայլը կատարել, ապա առնուազն անհասկանալի կը լինեն այն կոչերը, որ համախմբուելու եւ միասնական գործելու վերաբերեալ միւս քաղաքական ուժերին արել են Կոնգրեսի լիդերները, ընդհուպ Տէր-Պետրոսեանը, ով իր հանրահաւաքային ելոյթներից մէկը ընթացքում յայտարարեց, որ Կոնգրէսն ի զօրու չէ միայն իր ուժերով հասնել իշխանափոխութեան:*

*Թէեւ, միգուցէ Կոնգրէսը համարում է, որ այդ ընթացքում ինքն առաւել ուժեղացել եւ ամրացել է, եւ այժմ ունակ է իշխանափոխութեան խնդիրը լուծել միայնակ: Թէեւ, փաստը, որ օրինակ թիւ 12 ընտրատարածքում Կոնգրէսի մեծամասնական թեկնածուն*

> Եթէ Կոնգրեսը չփորձի ընդդիմադիր ռեսուրսի առաւել արդիւնաւէտ օգտագործման համար իրենից հասանելիք քայլը կատարել, ապա առնուազն անհասկանալի կը լինեն այն կոչերը, որ համախմբուելու եւ միասնական գործելու վերաբերեալ միւս քաղաքական ուժերին արել են Կոնգրեսի լիդերները

# ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ «ՄԱԹԵՄԱՏԻԿԱՆ» ԵՒ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

**ԿԱՐԷՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ**

*Վերջերս ԱԺ փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը յայտարարեց, որ վստահ է, իր կուսակցութիւնը համամասնական ընտրակարգով ստանալու է 37-40 տոկոս: Նոյն օրը ոստիկանութիւնը հրապարակում է ընտրացուցակները եւ պարզւում է, որ ՀՀ ընտրողների թիւը յարաճուն աճում է՝ արտագաղթին զուգահեռ:*

*Աւելի վաղ, մամուլում հրապարակումներ յայտնուեցին, որ իշխանութիւնները պատրաստւում են կեղծ անձնագրերի միջոցով, ապահովել կրկնակի, եռակի քուէարկութիւններ ՀՀԿ-ի համար: Երբ համադրում ես այս երեք հանգամանքերը, պարզ է դառնում, որ իշխանութիւնները պատրաստւում են զանգուածային կեղծիքների:*

*Քարոզարշաւը, ծրագրային քննարկումները, վարչապետի կողմից կուստոմսերի բաժանումը, չինական ավտոբուսներով շրջայցը, միայն «վարագոյրի» ֆունկցիա են կատարելու: Իշխանութիւնը չատ լաւ գիտի, որ ձայն չունի, այս փուլում արդէն հասկացել է, որ իր ձայն բերող մենեջերական մեքենան կիսականգնած վիճակում է ու յոյսը դրել է միայն կեղծիքների վրայ:*

*Կեղծ անձնագրերով բազմակի գրանցումներով, բազմակի քուէարկութիւնները իրականացւում են ոստիկանական համակարգի, անձնագրային սեղանների միջոցով: Այլ տարբերակ՝ գործնականում գոյութիւն չունի: Եւ այդ ենթատեքստում հասկանալի դարձաւ, թէ ինչու վերջերս ամբողջովին փոխուեց ՀՀ ոստիկանութեան անձնագրային եւ վիզաների վարչութեան ողջ ղեկավար կազմը: Հաւանաբար միայն այդ դէպքում էր հնարաւոր «փաստել», որ վերջին 4 տարիների ընթացքում թէեւ Հայաստանից արտագաղթել է մօտ 200 000 մարդ, սակայն ընտրողների քանակը նոյն ժամանակահատուածում աւելացել է 165 հազարով: Համաձայնուէք, որ սոյն մաթեմատիկական խնդրի լուծումը ոչ մի դոկտոր - պրոֆեսոր չի կարող լուծել: Քանզի այն մէկաֆիզիկական պատկերացումների ժանրից է, որին, սակայն, առարկայօրէն տեղեակ է երկրի գլխաւոր ոստիկանապետը: Պարզ է նաեւ այն, թէ ինչ է սպասւում մեզ՝ Մայիսի 6-ի ընտրութիւններին, որտեղ սոյն «հայկական» մաթեմատիկան դրսեւորուելու է ամբողջ տեսքով:*

*Իշխանութիւն իրաւունք ունի սա ժխտելու եւ մենք պարտաւոր ենք լսել նրա հակափաստարկները: Այս դէպքում հակափաստարկը մէկն է՝ օր առաջ կարգի բերել ընտրացուցակները: Յարաճուն արտագաղթի եւ մարդահամարի նախնական խայտառակ թուերի պարագայում (մօտ՝ 2.800.000 բնակչութիւն), ընտրողների թիւը չի կարող աճել: 2008 թուականի նախագահական ընտրութիւնների համեմատ այդ թիւն աճել է մօտ 165 հազարով: Ինչի հաշուին. Պատասխանէք այս հարցին:*

*Եթէ, այնուհանդերձ, իշխանութիւնը պնդեց իր թուերի հաւաստիութեան վրայ ու գնաց նման կեղծումների, ապա քաղաքական միւս ուժերին եւ ժողովրդին մնում է մէկ բան՝ պայքարել սեփական իրաւունքների եւ արժանապատուութեան համար: ՀԱԿ առաջիկայ հանրահաւաքը կարող է դառնալ առաջին պաշտօնական նախազգուշացումը: Դրանցի յետոյ նոյնը պէտք է ակնկալել ԲՀԿ-ից, ՀՅԴ-ից, Ժառանգութիւնից: Հակառակ դէպքում ստացւում է, որ հիմնական քաղաքական ուժերը գնում են ընտրութիւնների՝ նախապէս քցուած լինելու վճռականութեամբ:*

*«7 ՕՐ»*

*համախոհների, ընդդիմադիր ... *

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹԵՃԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $80.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $225.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

**ՀԱՅԱՍՏԱՆ**

# ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԸ ԸՆՏՐԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԵՂԾՄԱՆ ԳԼԽԱՒՈՐ ՌԵՍՈՒՐՍ Է ՀԱՄԱՐՈՒՄ

ՀԱԿ առաջնորդ, ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը առաջիկայ ընտրութիւնների կեղծման գլխաւոր ռեսուրսն է համարում «չարաբաստիկ ընտրացուցակները» եւ դրանցում Հայաստանից մշտապէս բացակայող քաղաքացիների անունների ընդգրկումը:

«Ամենագլխաւոր խնդիրը, որից կախուած է առաջիկայ բոլոր ընտրութիւնների ճակատագիրը եւ եթէ կուզէք՝ հայ ժողովրդի ճակատագիրը, այդ չարաբաստիկ ընտրացուցակներն են, որոնցում այսօր ընդգրկուած են Հայաստանից մշտապէս բացակայ արդէն ոչ թէ 500 հազար, այլ 700 հազար քաղաքացիների անուններ: Անցեալ ընտրութիւնների համեմատ այդ ցուցակը աւելացել է 185 հազարով»,- ՀԱԿ հանրահաւաքում Ազատութեան հրապարակի ամբիոնից յայտարարեց Լեւոն Տէր-Պետրոսեանը: - «Սա Վովա Գասպարեանի նուէրն է Սերժ Սարգսեանին, ցոյց տալու համար, որ ինքը Ալիկ Սարգսեանից շատ աւելի հանճարեղ նախարար է, որ 4 տարում կարողանում է ընտրողների թիւը 185 հազարով աւելացնել»:

ՀԱԿ առաջնորդը կոչ արեց «շատ լրջօրէն վերաբերուել այդ փաստին», համոզմունք յայտնելով, որ անգամ ընտրակաշառքը, բռնութիւնները, ծեծ ու ջարդը այս իշխանութիւնների համար «յաղթանակ երբեք չեն ապահովել»:

«Ո՛չ 98 թուականին, ո՛չ 2003 թուականին, ո՛չ 2008-ի ընտրութիւններում նրանք պարտուել են, ջախջախուել են, բայց ընտրութիւնների աւարտից յետոյ, երբ փակում են տեղամասերը, ինչ հանրահաշուիւ ասես նրանք կարող են անել՝ ի հաշիւ այդ բացակայ քաղաքացիների: Սա է կեղծիքների բոյնը, դուռը», - յայտարարեց Տէր-Պետրոսեանը:

Պնդելով, որ վերջին չորս տարիներին «վարչախումբը ապիկար ու յանցաւոր գործունէութիւն է ծաւալել», որ Հայ ազգային կոնգրէսը, թերեւս, Հայաստանի միակ քաղաքական ուժն է, որն «իր առջեւ դրել ու յաջողութեամբ լուծել է աւազակապետական վարչախմբի արատների ու յանցաւորութեան լիակատար բացայայտման խնդիրը», Լեւոն Տէր-Պետրոսեանը ներկայացրեց այն կոնկրետ քաղաքական ու օրէնսդրական նախաձեռնութիւնները, որոնցով ՀԱԿ-ը պատրաստւում է հանդէս գալ Ազգային ժողովում սեփական ծանրակշիռ պատգամաւորական խմբակցութիւնը ձեւաւորելու պարագայում:

Ըստ նրա, յաջորդ գումարման Ազգային ժողովի առաջին իսկ նստաշրջաններում ՀԱԿ-ն անմիջապէս բարձրացնելու է Սերժ Սարգսեանի «պաշտօնանկութեան եւ քրէական պատասխանատուութեան ենթարկելու հարցը». - «Հիմք ընդունելով այն իրողութիւնը, որ Սերժ Սարգսեանը ՀՀ նախագահի աթոռը զաւթել է «Ընտրական օրէնսգրքի» կոպտագոյն խախտման, համատարած ընտրակեղծիքների, զանգուածային բռնութիւնների եւ խաղաղ ցուցարարների նկատմամբ իրականացրած սպանդի հետեւանքով»:

Երկրորդ առաջնահերթ նախաձեռնութիւնը «1999թ. Հոկտեմբերի 27-ի ու 2008թ. Մարտի 1-ի ոճրագործութիւնների ուսումնասիրման եւ իրաւական հետեւանքներ ենթադրող զեկոյցների պատրաստման նպատակով լայն լիազորութիւններով օժտուած անկողմնակալ պատգամաւորական յանձնաժողովների ստեղծումն է»:

«Այսպիսի աւազակաբարոյ իշխանութիւն եւ դաժան լուծ Հայաստանն իր ողջ պատմութեան ընթացքում չի տեսել: Եթէ հասարակութիւնը չգիտակցի այս ցնցող ճշմարտութիւնը, եւ գայթակղուելով ընտրակաշառքով՝ իր ձայնը տայ իշխող կուսակցութեանը, ապա կամայ թէ ակամայ մասնակիցը կը դառնայ սեփական երկրի վերջնական կործանման, ու դրա համար իրենից բացի ոեւէ մէկին մեղադրելու իրաւունք չի ունենայ», - յայտարարեց Լեւոն Տէր-Պետրոսեանը՝ ելոյթի աւարտին հրապարակելով առաջիկայ խորհրդարանական ընտրութիւններում ՀԱԿ-ի կարգախօսը՝ «Ոչ մի ձայն՝ յանցաւոր ռեժիմին»:

# ՀՀԿ-Ն ԱՐՀԵՍՏԱԿԱՆ Է ՀԱՄԱՐՈՒՄ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ՇՈՒՐՋ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Իշխող Հանրապետական կուսակցութիւնը (ՀՀԿ) «արհեստական» է համարում այն իրարանցումը, որն ընդդիմութիւնը բարձրացրել է ընտրացուցակների հետ կապուած: Այս մասին «Ազատութիւն» ռադիոկայանին տուած հարցազրոյցում փոխանցեց Ազգային ժողովի փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը:



Ազգային ժողովի փոխնախագահ Էդուարդ Շարմազանով

Շարմազանովի խօսքով՝ մտահոգուելու մեծ առիթ չկայ, քանի որ ընտրական ցուցակները հրապարակային են եւ հրապարակուել են հենց այն նպատակով, որ ի յայտ եկած անճշդութիւնները պատկան մարմինները վերացնեն:

ՀՀԿ-ի խօսնակ Էդուարդ Շարմազանովի փոխանցմամբ՝ երբ իրենք ասում են, որ պէտք է ժողովրդավարական ընտրութիւններ լինեն, ապա դրա մէջ նախ եւ առաջ մտնում են նաեւ ընտրացուցակները: Ըստ նրա՝ ամէն ինչ արուելու է, որպէսզի ընտրութիւնների օրը ունենանք ընդունելի ընտրացուցակներ: Հարցին, թէ ինչո՞վ են բացատրում այն հանգամանքը, որ նախորդ ընտրութիւնների համեմատ ընտրողների թիւը զգալիօրէն աւելացել է (պաշտօնական տուեալներով՝ 359 հազարով), Շարմազանովն ասաց, թէ գլխաւոր փաստարկներից մէկն այն է, որ 90-ականներին ծնուածների թիւը աւելի շատ է եղել, քան մահացածներին, եւ նախորդ ընտրութիւնների համեմատ աւելացել է ընտրելու իրաւունք ունեցող 18 տարեկան քաղաքացիների թիւը: Նկատենք, սակայն, որ պաշտօնական տուեալներով՝ նախորդ ընտրութիւնների համեմատ այս տարի ընտրելու իրաւունք ունեցող 18 տարեկանների թիւն աւելացել է 185 հազարով:

«Դուք կարող էք ասել, որ կան մարդիկ, որոնք գաղթել են կամ Հայաստանում չեն, բայց բազմաթիւ մարդիկ կամ մեծամասնութիւնը, ովքեր Հայաստանից գնում են, օրինակ, արտագնայ աշխատանքի, Հայաստանի քաղաքացիութիւնից չեն հրաժարուել», - ասաց Շարմազանովը՝ յաւելելով. - «Արհեստական եմ համարում այն աժիոտաժը, որ բարձրացրեցին մեր ընդդիմադիր ընկերները: Իշխանութիւնը բացառելու է ցանկացած հակաժողովրդավարական, հակաօրինական դրսեւորում ընտրութիւնների, ընտրութիւնների նախապատրաստման ժամանակ եւ յետոյ»:

# ԵՐԿՐԱՊԱՀԻ 70 ԱՆԴԱՄՆԵՐ ԼՔԵԼ ԵՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒԸ

Երկրապահ կամաւորականների միութեան 70 անդամներ լքել են կազմակերպութիւնը՝ դա պատճառաբանելով ԵԿՄ-ի քաղաքականացման հանգամանքով:

Նրանք նամակ են յղել ԵԿՄ վարչութեան նախագահ Մանուէլ Գրիգորեանին, որում մասնաւորապէս ասուած է.

«Հաշուի առնելով Երկրապահ կամաւորականների միութեան կենտրոն տարածքային բաժանմունքի մասին մամուլում հնչած տեսակէտները, ստիպուած ենք մի քանի պարզաբանումներ կատարել հայ մարդկանց, մեր Երկրապահ ընկերների եւ երկրի քաղաքական կուսակցութիւնների ղեկավարների համար:

«Ելնելով Հայաստանի հանրապետութիւնում վերջին տարիներին առկայ քաղաքական լարուածութիւնից, խորհուրդ ենք տալիս մեզ չներքաշել խարդաւանքների եւ դաւադրութիւնների գործընթացների մէջ: Մենք հաւատարիմ ենք մեր սկզբունքներին եւ արդէն իսկ 12 տարի է չենք զբաղւում քաղաքականութեամբ: Չնայած բոլոր ընտրութիւններից յետոյ ստիպուած ենք լինում դիմակայել տարաբնոյթ խարդաւանքների եւ դաւադրութիւնների հետեւանքների վերացմանը:

«Մենք ամենեւին ցանկութիւն չունենք մեր ընտանիքում առկայ խնդիրները հանրութեան քննարկմանը ներկայացնելու, բայց միեւնոյն ժամանակ չենք ցանկանում մեր նախկին ընկերների կողմից մեր բարի համբաւը արատաւորող յօդուածներին ծանօթանալ: Յայտնում ենք Ձեզ, որ երբեւէ չենք թերացել մեր պարտականութիւնները կատարել Հայրենիքի եւ մեր կազմակերպութեան հանդէպ, ուստի եւ հասկանալի չեն մեր նկատմամբ ԵԿՄ անունից տարբեր մարդկանց մեկնաբանութիւնները մամուլում եւ իրականացուող կադրային քաղաքականութիւնը:

«Այսօր իրականացուող կադրային քաղաքականութեան արդիւնքում ԵԿՄ-ին անդամագրւում են անհատներ, որոնք ոչ մի կապ չունեն մեր, Երկրապահների, անցած ուղու հետ, աւելին բացի քաղաքական խարդաւանքների եւ դաւադրութիւնների, սեփական կազմակերպութիւններին եւ սկզբունքներին դաւաճանելուց, մեր երկիրը առեւտրային սեղանիկ տեսնելուց, մեզ վարկաբեկելուց, իրենց մարտական հեքիաթասած ուղին պատմելուց, վերջին 15 տարում ոչնչով չեն զբաղուել: Ելնելով վերոնշեալից, լինելով առաւել քան իրատեսական, ցանկութիւն չունենալով, որեւէ կերպ օժանդակել ԵԿՄ-ի պառակտմանը կամ հզօրութեան կորստին, հոգու խորքում մնալով երկրապահ ցաւով պէտք է նշենք, որ ստիպուած ենք կասեցնել մեր անդամակցութիւնը ԵԿՄ շարքերին, մինչեւ առաջացած խնդրի արդարացի, երկրապահին յարիր լուծում ստանալը»:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ



«Ընտրութիւնը քոնն է» կազմակերպութեան ներկայացուցիչները ասուլիսի ընթացքին

«Ընտրութիւնը քոնն է» կազմակերպութեան նախագահ Յարութիւն Համբարձումեանի համաձայն, դիտորդական խումբն արդէն արձանագրել է մի շարք խախտումներ, որոնք հիմնականում նման են նախորդ բոլոր ընտրութիւններում արձանագրուած խախտումներին:

Ըստ Յարութիւն Համբարձումեանի, տարբերակուած չէ բարեգործութիւնն ու ընտրակաշառքը, ընտրակաշառք է համարւում հիմնականում քուէարկութեան նախորդ օրը եւ քուէարկութեան օրը բաժանուած ապրանքը: «Մնացած օրերին դա չի դիտւում... դա դիտւում է քարոզարշաւ»,-ասաց նա:

Ի դէպ, պարոն Համբարձումեանը չխուսափեց ասել, թէ ովքեր են ներգրաւուած բարեգործութեան անուան տակ ընտրակաշառք բաժանելու գործում. «Բարեգործութիւնների հետ կապուած մենք նշում ենք Բարգաւաճ Հայաստանը, ՀՀԿ-ը եւ ՕԵԿ-ը»:

Կազմակերպութեան ներկայացուցիչ Յասմիկ Սարգսեանը մատնանշեց թաղային հեղինակութիւնների ակտիւ ներգրաւուածութիւնը ընտրական գործընթացներում, ընտրողների կամքի վրայ ներազդեցութիւնը կուսակցութիւնների կողմից:

# ԼՈՒՐԵՐ

## ՍԵՐԳԷՅ ԼԱՒՐՈՎԻՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԸ

Նախագահ Սերժ Սարգսեանը Ապրիլ 3-ին ընդունել է պաշտօնական այցով Երեւան ժամանած Ռուսաստանի արտգործնախարար Սերգէյ Լաւրովին:

Նախագահի մամլոյ գրասենեակի փոխանցմամբ՝ զրուցակիցները միմեանց շնորհաւորել են 1992 Թուականի հենց այս օրը երկու երկրների միջեւ դիւանագիտական յարաբերութիւնների հաստատման 20-ամեակի կապակցութեամբ:

Սարգսեանը եւ Լաւրովը երկուստեք ընդգծել են, որ Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ քաղաքական երկխօսութիւնը, բոլոր ոլորտներում՝ առեւտրատնտեսական, ռազմական, ռազմատեխնիկական, հումանիտար, նաեւ միջազգային կազմակերպութիւնների շրջանակներում դինամիկ զարգացող համագործակցութիւնը վկայում է բարեկամ երկու ժողովուրդների եւ պետութիւնների միջեւ առկայ ռազմավարական գործընկերութեան եւ ամուր դաշնակցային փոխյարաբերութիւնների մասին, որոնք տարէցտարի ամրապնդւում են երկու երկրների նախագահների միջեւ պարբերաբար տեղի ունեցող բարձր մակարդակի հանդիպումներով:

Սերգէյ Լաւրովը տարին յոբելեանական է համարել նաեւ այս տարուայ Օգոստոսին լրացող՝ Բարեկամութեան, համագործակցութեան եւ փոխադարձ օգնութեան մասին Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ ստորագրուած պայմանագրի 15-ամեակի առիթով եւ նշել, որ յոբելեանական տարում կազմակերպուող միջոցառումները համատեղւում են համագործակցութեան առաւել զարգացմանն ուղղուած որոշակի ծրագրերի իրագործմամբ:

Ռուսաստանի արտաքին քաղաքական գերատեսչութեան ղեկավարին ընդունել է նաեւ Ազգային ժողովի Նախագահ Սամուէլ Նիկոեանը:

## ԱՄՆ ԴԵՍՊԱՆ.-«ՁԵՐ ՊԵՏՈՒԹԻՒՆ Է, ՄԵՐ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ ՉԷ»



Դեսպան Ջոն Հեֆերն ելոյթ կ'ունենայ Հայաստան-ԱՄՆ դիւանագիտական յարաբերութիւններու 20-ամեակին առթիւ

Մայիսի 6-ի խորհրդարանի ընտրութիւններին Հայաստանում թերահաւատօրէն են վերաբերում,- կարծում է ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Ջոն Հեֆերնը:

«Ոմանք արդէն կանխաւ յայտարարել են, որ Մայիսին կայանալիք ընտրութիւնները կեղծուելու են եւ այժմուանից արդէն կոչ են անում դուրս գալ բողոքի ցոյցերի քուէրակութեան յաջորդ օրը: Իսկ նրանք, ովքեր ցանկանում են կառուցել ժողովրդավարութիւն, չեն կարող սահմանափակուել յայտարարութիւններով, այլ պէտք է ստեղծեն ինստիտուցիոնալ ցանցեր դաշինքներ՝ իրենք ձայնը լսելի դարձնելու համար»,-ասաց դեսպանը:

Հայաստան-ԱՄՆ դիւանագիտական յարաբերութիւնների 20-ամեակին նուիրուած միջոցառմանը ներկայ երեւանեան բուհերի ուսանողներից մէկին հետաքրքրեց, թէ ինչ կարող է անել ԱՄՆ-ը՝ կանխելու հնարաւոր ընտրակեղծիքները.

«Ձեր պետութիւն է, մեր պետութիւնը չէ, ուստի մենք ոչինչ չենք կարող անել: Մենք ոչինչ էլ չենք կարող անել՝ կանխելու ընտրակեղծիքները: Սակայն մենք կարող ենք տարբեր դաշտերում գտնել գործընկերների, աշխատել նրանց հետ, խրախուսել, որ նրանք պահանջեն պատկան մարմիններից, որ օրէնքներն ի կատար ածուեն: Առաջին քայլը պէտք է լինի այն, որ ընտրողների կողմից լինեն բողոքներ, յայտարարութիւններ: Միայն այդ ճնշումների դէպքում իշխանութիւնները կ'անեն այն, ինչ պէտք է անեն: Մենք կարող ենք լինեն գործընկերներ, սակայն դուք պէտք է ապահովէք ընտրութիւնների անկախ ու ազատ լինելը»,-եղաւ դեսպանի պատասխանը;

Ուսանողներից մէկն էլ դեսպան Հեֆերին խնդրեց գնահատել ՀՀ 3 նախագահների հետ ԱՄՆ-ի համագործակցութիւնը: Հարցին դեսպանը մօտեցաւ դիւանագիտօրէն՝ խուսափեց որեւէ անուն տալուց. «Կարծում եմ, որ մեր յարաբերութիւնները բաւականին ամուր են այսօր ու օրէցօր լաւանում են»:

Փոխարէնը Ջոն Հեֆերնը մեծ ուրախութեամբ խօսեց ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան վիճակի մասին՝ նշելով, որ այն լուրջ փոփոխութիւնների է ենթարկուել 20 տարիների ընթացքում:

## ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՔԼԻՆԹՈՆԻՆ ՅԱՄՈՉԵԼ ԵՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՕՐԻՆԱԳԾԵՐԻ ԴԷՄՆ ԱՌՆԵԼ

Ստամբուլում, Ապրիլի 1-ին անցկացուած «Սիրիայի բարեկամների» համաժողովի շրջանակներում տեղի ունեցած Քլինթոն-Դաւութօղլու եւ Քլինթոն-Էրդողան հանդիպումներում բացի Սիրիայի իրադարձութիւնների եւ Իրանի միջուկային ծրագրի հետ կապուած թեմաներից, օրակարգում է եղել Հայոց ցեղասպանութեան հետ կապուած եւ Հայաստանի հետ յարաբերութիւնների կարգաւորման թեմաները:

Այս մասին տեղեկացնում է թուրքական «Հուրրիէթ» թերթը, պնդելով, թէ ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնի հետ առանձին-առանձին հանդիպումներ անցկացրած Թուրքիայի վարչապետ Ռեջէփ Թայիփ Էրդողանը եւ Թուրքիայի ԱԳ Նախարար Ահմեդ Դաւութօղլուն անհրաժեշտ են համարել վերջ դնել ամէն տարի Ապրիլի 24-ից առաջ ԱՄՆ-ում հայկական նախագծերի օրակարգ բերելուն:

Քլինթոնն իր հերթին նշել է, թէ տեղեակ է, թէ ինչքան զգայուն է այդ հարցում Թուրքիան՝ պնդելով, որ այս տարի նման նախաձեռնութիւն չի սպասւում:

Էրդողանն ու Դաւութօղլուն պնդել են, թէ Թուրքիան ինչպէս միշտ պատրաստ է Հայաստանի հետ յարաբերութիւնները կարգաւորել, սակայն անհրաժեշտ է, որ Հայաստանի իշխանութիւններն ազատուեն ներքաղաքական մտավախութիւններից եւ Ցեղասպանութեան հարցը օրակարգ բերելուց:

## ԸՆՏՐԱՑՈՒՑԱԿՆԵՐՈՒ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

*Շարունակուած էջ 1-էն*

«Սրանք ուղղակի անհեթեթ թուեր են: Տեսականօրէն հնարաւոր չէ, օոր Հայաստանում մինչեւ 18 տարեկանները լինեն միայն 400.000: Ընտրողների թիւերի ուռճացումն ուղղակի լցոնման պարզագոյն մեթոդն է, որ փորձում են կիրառել իշխանութիւնները»,-«Արմենիա Նաուին» յայտնած է «Ժառանգութիւն» խմբակցութեան ղեկավար Ստեփան Սաֆարեան:

Միւս կողմէ սակայն, Հայաստանի ոստիկանութիւնը իր տարածած մէկ հաղորդագրութեամբ կը շեշտէ, թէ թիւերու ուռճացման մասին պնդումները «չեն համապատասխանում իրականութեանը»:

Կասկածները աւելի ու աւելի արմատացան երբ ի յայտ եկան բազմաթիւ պարագաներ, ուր նոյն բնակարանի հասցէով արձանագրուած են 100-է աւելի մարդիկ: Կամ գտնուեցան նոյն հասցէներու վրայ բազմաթիւ անուններ, որոնց ծննդեան թուականին առջեւ գրուած է 00:

Ոստիկանութեան անձնագրերու ու վիզաներու վարչութիւնը յայտնաբերուած բոլոր անճշդութիւններուն առթիւ կու տայ նոյն բացատրութիւնը՝ «հաւանաբար դա կրկին զուտ տեխնիկական խնդիր է: Տեղեակ ենք ու արդէն ստուգման համապատասխան միջոցներ ձեռնարկուած են»:

Զարմանք յառաջացուց նաեւ Ազգային Ժողովի Հանրապետական պատգամաւոր Շիրակ Թորոսեանի այն բացայայտումը որ, Հայաստանի իշխանութիւններու որոշումով, ջաւախահայերը հաշուառում կը ստանան Հայաստանի մէջ:

Այս առթիւ, Հայ Ազգային Գոնկրէսը (ՀԱԿ) Հայաստանի ոստիկանապետ Վլադիմիր Գասպարեանէն խնդրած է իրենց տրամադրել Հայաստանէն մշտապէս բացակայող, բայց ընտրացուցակներու վրայ ընդգրկուած քաղաքացիներու ամբողջ ցանկը:

«Զկատարելով մեր խնդրանքը, դուք կասկածի տակ կը դնէք յառաջիկայ ընտրութիւնների օրինականութիւնը եւ մեծ հարուած կը հասցնէք Հայաստանի միջազգային վարկին»,- ըսուած է ոստիկանապետին ուղղուած ՀԱԿ-ի նամակին մէջ:

ՀԱԿ-ի այս նախաձեռնութեան միացած է նաեւ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը: Իսկ, Ժառանգութիւն կուսակցութեան աղբիւրները յայտնած են որ, ՀԱԿ-ի նամակին միանալու հարցը քննարկման տակ է:

## ՇՈՒԷՅՑԱՐԻԱՅԻ ԴԱՏԱԽԱԶՈՒԹԻՒՆԸ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾ ՉԻ ՅԱՐՈՒՑԵԼՈՒ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԺԽՏԱԾ ԹՈՒՐՔ ՆԱԽԱՐԱՐԻ ԴԷՄ



Եւրամիութեան հետ հարցերով նախարար Էգեմէն Բաղըշ

Շուէյցարիայի Ցիւրիխի կանտոնի դատախազութիւնը հրաժարուել է դատական գործ յարուցել Թուրքիայի՝ Եւրամիութեան հետ հարցերով նախարար Էգեմէն Բաղըշի դէմ, ով Շուէյցարիայում ժխտել էր Հայոց ցեղասպանութիւնը:

Ինչպէս տեղեկացնում է թուրքական CNNturk-ը, Ցիւրիխի գլխաւոր դատախազութեան կողմից տարածած յայտարարութեան մէջ նշուել է, որ 2012-ի Յունուարի 30-ին Բաղըշի կողմից 1915-ի հետ կապուած յայտարարութիւն է հնչել, որը մեծ արձագանք է գտել մամուլում եւ հեռուստատեսութեամբ: «Շուէյցարիայի ԱԳՆ-ի հետ խորհրդակցութեան ժամանակ պարզել ենք, որ Բաղըշն այդ յայտարարութիւն անելու ժամանակ ունեցել է դիւանագիտական անձեռնմխելիութիւն»,- նշուել է Ցիւրիխի գլխաւոր դատախազութեան յայտարարութեան մէջ:

Նշենք, որ աւելի վաղ Շուէյցարիայի ԱԳՆ-ն յայտարարել էր, թէ Համաշխարհային տնտեսական ֆորումին մասնակցելու համար Դաւոս եկած օտարերկրեայ կառավարութիւնների բոլոր անդամներն, ըստ միջազգային օրէնքների, օժտուած են անձեռնմխելիութեամբ: «Սակայն, ըստ միջադէպերի, անձեռնմխելիութիւնը կարող կասեցուել: Էգեմէն Բաղըշի դէմ դատական գործ սկսելու վերջնական որոշում կայացնելը ոչ թէ ԱԳՆ-ի, այլ դատական մարմինների գործն է»,-ասուել է Շուէյցարիայի ԱԳՆ-ի պատասխանում:

Յիշեցնենք, որ Էգեմէն Բաղըշը Ցիւրիխում ասել էր, թէ ինքը ցեղասպանութիւնների ժխտումը քրէական յանցանք համարող երկրում էլ կարող է ասել, որ Հայոց ցեղասպանութիւն չի եղել: «Ես այսօր Շուէյցարիայում յայտարարում եմ, որ 1915-ի իրադարձութիւնները ցեղասպանութիւն չեն: Թող գան ու ինձ ձերբակալեն: Այդ օրէնքները թղթի մի կտորից այն կողմ չեն անցնում»,-ասել էր Բաղըշը: Այնուհետ Ցիւրիխի դատախազ Քրիստին Բրաունշուէյգը Բաղըշի դէմ նախնական հետաքննութիւն է սկսել՝ շեշտելով, որ այն ընթանում է Շուէյցարիայի քրէական օրէնսգրքի 261-րդ յօդուածի յատկանիշներով:

# ՀՀ ՍՓԻՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐ ՀՐԱՆՈՅՇ ՅԱԿՈԲԵԱՆ.- « ՍՓԻՒՌՔԱՀԱՅԵՐԸ ԿՐՆԱՆ ԻԲՐԵՒ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐՈՒ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ ՆՈՐ ՄՕՏԵՑՈՒՄՆԵՐ ԲԵՐԵԼ ՀԱՅՈՑ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ»,

*Մեր ընթերցողներուն կը ներկայացնենք «Հայաստանի Զրուցակից»-ի կատարած հարցազրոյցը՝ ՀՀ սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանի Հետ.*

- Սփիւռքի նախարարութիւնը Հայաստանի մէջ ամենաերիտասարդն է: Ի դէպ երբ պիտի բացուէր, շատերը կը տարակուսէին՝ ան կ'արդարացնէ՞ իր գոյութիւնը: Գոյութեան եւ գործունէութեան քանի մը տարուան փորձն ունենալով՝ ի՞նչ ձեռքբերումներ ունեցած է նախարարութիւնը, որքանո՞վ այդ կառոյցի գոյութիւնը նպաստած է Հայրենիք-Սփիւռք կապի ամրապնդման ու զօրացման:

*- Նախարարութեան ստեղծման հարցում տարակուսողները նախ պէտք է հասկանան, որ համաշխարհային, տարածաշրջանային մարտահրաւէրների եւ մրցակցութեան պայմաններում մեր նորանկախ պետութիւնը նախեւառաջ պէտք է համագործակցի Սփիւռքի հետ եւ օգտագործի աշխարհասփիւռ հայութեան ամբողջ ներուժը: Ակնյայտ է, որ սփիւռքը համաշխարհայնացուող աշխարհում նոր որակ եւ դերակատարութիւն է ստանձնել: Նախարարութիւն ստեղծելու նպատակը Հայրենիք-Սփիւռք գործակցութեան ընդլայնումն ու Սփիւռքի ներուժը յանուն հայրենիքի զարգացման առաւելագոյնս օգտագործելն է, հայոց պետութեան զօրացումն ու առաջընթացը, Արցախի անկախ եւ անվտանգ գոյութեան ապահովումը եւ ինքնորոշման իրաւունքի միջազգային ճանաչումը, հայապահպանութիւնը եւ հայ ինքնութեան ամրապնդումը, Հայոց ցեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման գործընթացի ընդլայնումը, ինչպէս նաեւ հայ ժողովրդի համախմբումը հայ եկեղեցու շուրջ:*

*Սփիւռքի նախարարութիւնը բաւականին գործ է արել Հայրենիք-Սփիւռք գործակցութիւնը հզօրացնելու, զարգացնելու, ինչպէս նաեւ մեր հայրենակիցներին ազգային ինքնութեան գաղափարի շուրջ համախմբելու համար: Նախարարութեան օգնութեամբ Սփիւռքի կարեւոր խնդիրներն ու հարցադրումները քննարկման առարկայ են դառնում ՀՀ կառավարութիւնում, այսինքն՝ պետական ուշադրութեան են արժանանում: Սա նշանակում է, որ Սփիւռքի կրթական, մշակութային, հասարակական-քաղաքական, բարեգործական, կրօնական, երիտասարդական, լրատուական եւ այլ կազմակերպութիւնների գործունէութեանը մասնակցում է Հայաստանի Հանրապետութիւնը՝ պետականութեան գործիքների ամբողջ զինանոցով:*

- Հայապահպանութեան գլխաւոր զէնքը կրթօճախն է: Այնինչ միայն որոշ գաղթօճախներու մէջ կան հայկական դպրոցներ: Անոնք ալ գլխաւորաբար կիրակնօրեայ կամ եկեղեցիներուն կից դպրոցներ են, ուր կը դասաւանդուին հայագիտական առարկաներ: Այդ դպրոցները ունին արհեստավարժ մասնագէտներու ու դասագիրքերու, յաճախ նաեւ՝ գոյատեւման համար ֆինանսական միջոցներու անհրաժեշտութիւն: Նախարարութիւնը որեւէ ծրագիր կ'իրականացնէ՞ այդ կարիքները հոգալու համար:

*- Սփիւռքահայերու լեզուամշակութային ուծացմանը դիմակայելու եւ նրանց ինքնութեան պահպանութեան գործում նախարարութիւնը մեծապէս կարեւորում է Սփիւռքի կրթամշակութային խնդիրների լուծմանն աջակցող բազմաթիւ ծրագրերը: Ցաւօք, առայսօր պետական միջոցների հաշուին Սփիւռքի դպրոցները մասնագէտներով լիարժէքօրէն չեն ապահովւում:*

*2009-20011-ին մեր նախարարութեան աջակցութեամբ ընդլայնուել է Հայաստանում սփիւռքահայ ուսուցիչների վերապատրաստման ծրագիրը: Զգալի աշխատանքներ են իրականացուել՝ կրթօջախներին ուսումնական գրականութեան եւ օժանդակ նիւթերի տրամադրման համար: Մի շարք տարածաշրջանների երկրների համայնքային կառոյցների, հայկական կազմակերպութիւնների հետ աշխատանքների արդիւնքում վերջին տարիներին ստեղծուել է շուրջ 100 նոր՝ մէկօրեայ դպրոց՝ ՌԴ-ում, եւրոպական երկրներում, ԱՄՆ-ում: Սփիւռքի կրթօճախներին, հայ մանկավարժներին, հայագիտական առարկաների ուսուցիչներին ուսումնամեթոդական, արտադասարանական աշխատանքներին աջակցութեան նպատակով հայաստանեան եւ սփիւռքեան կրթօճախների միջեւ իրականացւում է «քոյր դպրոցներ» ծրագիրը: Սփիւռքի երիտասարդութեան Հայաստան այցելութիւնների «Արի տուն» ծրագրով իրականացւում են Սփիւռքի երիտասարդների համար հայրենագիտութեան, լեզուի արագացուած ուսուցման դասընթացներ: Երեւանի պետական համալսարանի բազայի վրայ 2012-ին կազմակերպելու ենք «Սփիւռք» ամառնային դպրոց՝ ուր կը գործեն հայոց լեզուի արագացուած դասընթացներ, ազգային երգի ու պարի խմբավարների, պարուսոյցների վարպետութեան դասընթացներ, կրթօճախների ուսուցիչների, տնօրէնների, կազմակերպիչների վերապատրաստում, սփիւռքահայ երիտասարդ առաջնորդների դպրոց, Սփիւռքի լրագրողների դպրոց:*

- Կարելի՞ է ըսել, թէ Սփիւռքը այսօր միակուռ, զօրեղ կառոյց է, որուն գործողութիւններն ու գաղափարները համաձայնեցուած են: Կա՞յ համակարգող մարմին կամ գուցէ նախարարութի՞ւնը ստանձնած է այդ դերը:

*- Մենք այսօր չենք կարող պնդել, թէ հայկական Սփիւռքը միակուռ եւ միասնական կառոյց է, որի տարբեր հատուածների գործողութիւնները եւ գաղափարները լիովին համաձայնեցուած են: Հեշտ գործ չէ 7 միլիոնանոց բազմամշակոյթ, բազմալեզու եւ բազմակրօն Սփիւռքը միաւորել մէկ միասնական կառոյցի մէջ: Սակայն կան մի քանի համազգային գաղափարներ, որոնց շուրջ հնարաւոր է եւ համախմբւում է ամբողջ հայութիւնը: Դրանք են՝ հայկական պետականութեան հզօրացումը, Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի արդարացի լուծումը, Հայոց ցեղասպանութեան համընդհանուր ճանաչումը եւ հետեւանքների վերացումը, համախմբումը հայ եկեղեցու շուրջ: Տարբեր մակարդակներում քննարկուել եւ շարունակւում են քննարկումները համահայկական համակարգող մարմնի ստեղծման գաղափարի շուրջ:*

- Նախարարութիւնը կոչուած է խթանելու ներգաղթը եւ աջակցելու ներգաղթեալ հայրենակիցներուն: Ի՞նչ չափերու կը հասնի հայրենադարձութիւնը եւ նախարարութիւնը հայրենադարձութիւնը խթանող ի՞նչ միջացառումներ կ'իրականացնէ, որքանո՞վ են անոնք իրատեսական: Ի՞նչ աջակցութիւն կը ստանան Հայաստան ներգաղթածները:

*- ՀՀ նախագահը նախարարութեան առջեւ ռազմավարական կարեւոր խնդիր է դրել՝ զբաղուել հայրենադարձութեան խթանման ծրագրերի մշակմամբ:*

*Մշակուել է երկու հիմնարար փաստաթուղթ՝ «Հայրենադարձութեան գործընթացի կազմակերպման հայեցակարգը» եւ վերջինիս հիման վրայ՝ «Հայրենադարձութեան մասին» ՀՀ օրէնքը: Առայժմ օրէնքի նախագիծը գտնւում է ՀՀ Ազգային ժողովում եւ ընդգրկուած է նստաշրջանի օրակարգում: Օրէնքի ընդունումից յետոյ ուղղակիօրէն կը կարողանանք զբաղուել հայրենադարձութեան խթանման ծրագրերի մշակմամբ եւ իրականացմամբ:*

*Քանի որ հայրենադարձի իրաւական կարգավիճակ ՀՀ-ում դեռ գոյութիւն չունի, այդ ամէնը որեւէ տեղ չի արձանագրւում: ՀՀ հայրենադարձուածների թիւը նախարարութիւնը ճշդում է որոշակի փաստերի համադրմամբ՝ քաղաքացիութիւն ստացածների եւ ՀՀ-ում բնակարան գնողների քանակ, ՀՀ-ում կարճաժամկէտ կամ երկարաժամկէտ բնակութիւն հաստատող՝ ծագումով հայերի թիւ, այս կամ այն կարգավիճակով ՀՀ-ում գտնուող հայերի թիւ եւ այլն: Ընդհանուր առմամբ կարող ենք ասել, որ մէկ տարում մօտ 4-5 հազար մարդ է տեղափոխւում Հայաստան՝ մշտական բնակութեան: Դարձեալ նկատի պէտք է ունենանք, որ թիւը շատ մօտաւոր է, քանի որ յստակ հաշուառում չի իրականացւում:*

- Նախարարութեան շնորհիւ հայրենիքի մէջ ներդրումային ի՞նչ ծրագիրներ իրագործուած են: Մեծ չէ՞ սպառնալիքը, որ մեր երկրի մէջ պիզնեսի համար ստեղծուած պայմաններու մէջ սփիւռքահայը կրնայ հիասթափիլ ու վաղ թէ ուշ դադրեցնել իր գործունէութիւնը: Այդ գործարարներուն համար արտօնութիւններ կա՞ն՝ օրէնսդրական, հարկային եւ այլն:

*- Հանրապետութիւնում տնտեսական միջավայրի, պիզնես միջավայրի, հարկային եւ մաքսային քաղաքականութեան որոշակի պարզեցում, յստակեցում է նկատւում: Բոլոր այն բարեփոխումները, որոնք ուղղուած են այս բնագաւառին, նաեւ գնահատւում են միջազգային կառոյցների եւ կազմակերպութիւնների կողմից: Սա խօսում է այն մասին, որ մենք լինելով Առեւտրի միջազգային կազմակերպութեան անդամ՝ չենք կարող օրէնքներ եւ օրէնսդրական ակտեր ընդունել, որոնք դէմ լինեն միջազգային նորմերին, միջազգային պահանջներին: Մեր երկրում աւելանում են ներդրումների թիւը, համատեղ ձեռնարկութիւնների թիւը: Այսօր Հայաստանում գրանցուած է 4500-ից աւելի համատեղ ձեռնարկութիւն՝ մանր եւ միջին պիզնեսի ոլորտում: Ի հարկէ, ունենք նաեւ խոշոր պիզնեսի ներկայացուցիչներ՝ Էռնեկեան, Թուֆենկեան, Յովնանեան եւ այլոք, բայց բոլոր դէպքերում առաւել կշիռ է կազմում մանր եւ միջին պիզնեսը: Բնականաբար ասել, թէ Հայաստանում բոլորը յաջողութեան են հասնում, ի հարկէ, հնարաւոր չէ: Շատ դէպքերում մեր հայրենակիցները գալով հայրենիք՝ իրենք են ընտրում իրենց գործընկերոջը, չեն հարցնում ոչ պետութեանը, ոչ պաշտօնեային եւ ոչ որեւէ մէկին: Տարիների ընթացքում հենց իրենց միջեւ որեւէ հակասութիւն կամ դժուարութիւն է առաջանում, մէկը միւսին խաբում է, անմիջապէս սկսում են աղմկել, թէ Հայաստան պետութիւնն իրենց խաբեց: Հայաստանցիներն իրաւունք չունեն խաբել սփիւռքահային, հայաստանցին պէտք է, ընդհակառակը, գրկաբաց ընդունի, ոգեւորի իր հայրենակցին, որ նա գայ, այստեղ հաստատուի եւ կարողանայ պիզնեսը զարգացնել, աշխատատեղ ստեղծել: Լինում են նաեւ դէպքեր, երբ օրէնքի հետ են առնչւում եւ փորձում են այն շրջանցել: Ես կ'ուզենայի դիմել մեր բոլոր հայրենակիցներին թէ Հայաստանում, թէ սփիւռքում. յիշենք՝ աւելի բարձր իշխանութիւն չկայ, քան օրէնքի իշխանութիւնն է, եւ մենք պարտաւոր ենք օրէնքը կատարել. կարեւոր չէ, Հայաստանու՞մ, թէ Ֆրանսիայում, Լիբանանու՞մ թէ, Ամերիկայում: Միւս բարդութիւնն էլ այն է, որ սփիւռքում կարծես օդի մէջ տարածուած է այն գաղափարը, որ եթէ Հայաստանում են, անպայման իրենց կարող են խաբել, ձեռքից վերցնել, թոյլ չտալ, որ աշխատանքը զարգանայ: Մենք ունենք սփիւռքահայեր, որոնք եկել են, ներդրում են կատարել հայրենիքում եւ շահ են ստանում: Ինչքան շահ ստանան՝ այնքան մեր օգուտն է, որովհետեւ ստեղծում են աշխատատեղ, որովհետեւ պայքարում են աղքատութեան դէմ, պայքարում են արտագաղթի դէմ: Հետեւաբար ամէն պիզնեսի կայացում հայրենիքում՝ ամենամեծ հայրենասիրութիւնն է:*

*Ամփոփելով ձեր հարցը՝ կ'ուզենայի ասել՝ եկէք գործենք օրէնքի շրջանակներում, եկէք մեր պիզնեսը օտար երկրներում դնելու փոխարէն դնենք մեր հայրենիքում, հզօրացնենք մեր հայրենիքը: Եթէ բոլորս միայն երես թեքենք, բոլորս միայն բացասականն ասենք, իրօք, երկիրը դժուար կը զարգանայ:*

- Չէ՞ք կարծեր, որ Սփիւռքը որպէս հայութեան մաս՝ իրաւունք ունի մասնակցութիւն ունենալու հայրենիքի քաղաքական կեանքէն ներս: Օրինակ Ազգային ժողովի պատգամաւորներ ընտրուին նաեւ սփիւռքէն: Ի դէպ մի քանի տարի առաջ առաջարկուած է երկպալատ Ազգային ժողով ստեղծելու գաղափարը: Ի՞նչ ճակատագիրի արժանացաւ ան:

*- Հայաստանի Հանրապետութիւնը մենք հռչակել ենք համայն հայութեան հայրենիք: Դա նշանա-*

*Շար.ը էջ 18*

# Ս. ԶԱՏԿՈՒԱՅ ՊԱՏԳԱՄ ՀԱՅՑ. ԱՒԵՏ. ԵԿԵՂԵՑՒՈՅ ԿՈՂՄԷ

*Քրիստոս Յարեաւ Ի Մեռելոց*

«Դուք մի՛ վախնաք, քանի որ գիտեմ թէ կը փնտռէք Յիսուսը՝ որ խաչուեցաւ: Ան հոս չէ, որովհետեւ յարութիւն առաւ» (Մատթ. 28. 6):

PASADENA, CA -- In its 35th year, the Land and Culture Organization (LCO) is returning to Armenia again this summer to continue restoration work on historical Armenian sites.

Last year, over 60 dedicated volunteers from Armenia, Canada, England, France, Nagorno-Karabakh, Syria and the United States came throughout the summer restoring their Armenian legacy. This summer's campaign is gearing up, and volunteers have already submitted applications.

This upcoming summer, LCO campaigns will be conducted at two locations. LCO will be returning to the village of Yeghvard located in the southern Syunik Province on the border of Armenia and the liberated areas surrounding Artsakh. This summer, volunteers will unearth archaeological excavations on the village outskirts. This ancient site was discovered in 2011 and dates from the 1st Century B.C pre-Christian Hellenic period. Last summer, LCO completed the restoration and consecrated the 17th Century Astvatzatzin Church in Yeghvard.

To the north, volunteers will continue work on the fascinating 7th Century Tchitchkhanavank Monastery in the Shirakamut village in the Shirak Region near Spitak. The 2011 group uncovered an ancient fire pit adjacent to the church grounds along with jewelry and artifacts. Construction of Tchitchkhanavank's foundation walls will continue to be rebuilt. This project began in 2008 and will continue for the next few years. Architects, historical experts, skilled craftsmen, and LCO Board Members oversee all restoration projects.

This summer's Land and Culture campaign will be from July 9 until August 3. In addition to the work, volunteers will enjoy weekend excursions throughout Armenia. To participate in this exciting opportunity, applications must be received on-line at www.lcousa.org by May 15.

For over 30 years, LCO has been



one of the earliest volunteers groups in Armenia and Karabakh working to restore, renovate, and rejuvenate the historical monuments and sites of our nation. It has performed this mission through its summer campaigns, by volunteers of every age from the Diaspora and Armenia. To help our mission or join in our summer volunteer program, you may reach us at www.lcousa.org.

# Visiting Russian Foreign Minister

**Continued from page 1**

tions to problems concerning Iran achieved through dialogue and negotiations, rather than use of force," he said.

The Iran standoff as well as the situation in Syria were apparently on the agenda of the two ministers' talks which Nalbandian said testify to a "high level of political dialogue" between Moscow and Yerevan. A statement by the Armenian Foreign Ministry said they discussed "ongoing developments in the Middle East" and agreed on "the need to solve problems through dialogue."

According to the statement, Lavrov and Nalbandian also had a "detailed discussion" on international efforts to end the Nagorno-Karabakh conflict. Nalbandian was quoted as praising Russia for its active involvement in the negotiating process.

Speaking at the news conference, Lavrov said that both Armenia and Azerbaijan are his country's "strategic partners" and that Moscow will carry on with its Karabakh mediation. He also defended the work of the OSCE Minsk Group co-chaired by Russia, the United States and France.

The Russian FM visited Tsitsernakaberd on Monday morning and laid a wreath at the memorial to the Armenian Genocide victims.

# Police Clash With Yerevan Park Protesters

**Continued from page 1**

entist Andreas Ghukasian, challenged Melkonian to arrest him and his comrades. "We are ready. Punish us," said Ghukasian.

"We don't want to arrest you," replied Melkonian. "I'm just amazed by your strong desire." "We are urging you not to go to extremes," added the police official.

The campaigners left the park shortly afterwards, promising to stage fresh and larger protests there. "This is only the beginning," Khzmalian told journalists. "We will bring along a hundred, a thousand, ten thousand people."

# ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՆՐԱՆ ԿՈՉԵՑ ՀԱՅՐԻԿ

***ՌՈՄԻԿ ՅՈՎՆԱՆԵԱՆ***
***«Վան-Վասպուրական» հայրենակցական հասարակական կազմակերպութեան նախագահ***



*Հայ ժողովուրդն իր դարաւոր պատմութեան ընթացքում ունեցել է անհատներ, որոնց գործունէութիւնն ուղղուած է եղել ազգին անմնացորդ ծառայելու վեհ նպատակին: Այդ անհատների համաստեղութիւնում ուրոյն տեղ ունի Հայոց Հայրիկը՝ Մկրտիչ Խրիմեանը:*

*Հայրիկը ծնուել է Վանի շրջանի Առճակ գիւղում 1820 թուականի Ապրիլի 4-ին: Սկզբնական կրթութիւնը ստացել է իր հօրեղբօր՝ Խաչատուրի մօտ, այնուհետեւ ուսանել է Վասպուրականի Լիմ եւ Կտուց անապատների վանքերին կից դպրոցներում: Որոշ ժամանակ անց Հայրիկը թողնում է ուսումը, անցնում Վան եւ շուրջ հինգ ամիս շրջում Վասպուրականի բոլոր գաւառները, ծանօթանալով հայրենի երկրի բնութեանը, ժողովրդի կեանքին, նրա պատմաճարտարապետական յուշարձաններին: Նա ականատես եղաւ հայերի նկատմամբ թուրք իշխանաւորների եւ նրանց կողմից խրախուսուող քրտական ցեղերի կատարած բարբարոսութիւններին, մզկիթների վերածուած կամ աւերակ դարձրած եկեղեցիներին: Հայ ժողովրդի մէջ սկսել էր աստիճանաբար հասունանալ զէնքի միջոցով ազատութիւն ձեռք բերելու գաղափարը, որին նպաստում էին նաեւ Օսմանեան Թուրքիայի դէմ պալքանյան մի շարք երկրներում սկսուած բուրժուա-ժողովրդավարական յեղափոխութիւնները: Անհրաժեշտութիւն էին դարձել ժողովրդին լուսաւորելը եւ նրա մէջ ազգային ինքնագիտակցութիւնն արթնացնելը: Եւ այդ նպատակների իրագործմանն էլ նուիրաբերեց իր կեանքը մեծ հայրենասէրը:*

*1847 թ. նա ուղեւորւում է Արեւելեան Հայաստան, լինում Էջմիածնում, Անիում, Գիւմրիում, ապա անցնում է Թիֆլիս, Պաթում, գալիս Կ. Պոլիս, որտեղ մնում է մինչեւ 1850 թ.: Այստեղից Մ. Խրիմեանը ուղեւորւում է Երուսաղէմ, ապա՝ Կիլիկիա եւ որպէս ուսուցիչ մէկ տարի աշխատում Սիսի դպրոցում:*

*1852 թ. Մ. Խրիմեանը վերադառնում է Վան եւ երկու տարի անց, իր ժողովրդին եւ ազգին աւելի օգտակար լինելու նպատակով, 1854 թ. Փետրուարի 14-ին, Աղթամարի Ս. Խաչ եկեղեցում ձեռնադրւում է վարդապետ՝ կարդալով իր առաջին քարոզը եւ խոստանալով ազնուօրէն ծառայել ժողովրդին: Նրա առաջին գործը եղաւ Վանում դպրոց բացելու թոյլտուութիւն ստանալը, որը, սակայն, մերժուեց Աղթամարի միաբանութեան կողմից: 1855 թ. նա դարձեալ Կ. Պոլսում էր եւ այստեղ հիմնադրում է «Արծուի Վասպուրական» հանդէսը: Սակայն նրա փայփայած նպատակը Աղթամար կղզում կրթօճախ եւ տպարան հիմնելն էր եւ այնտեղ հայ երեխաներ ուսուցանելը, ինչը հարկադրում է նրան վերադառնալ Վան՝ իր հետ տանելով տպագրական երկու մեքենայ, թուղթ եւ տպագրութիւն կազմակերպելու այլ պարագաներ: Եւ ահա 1857 թ., վանքի ողջ միաբանութեան հետ, Մ. Խրիմեանը երեք ամսում կառուցում է տպարան եւ դպրոցի շէնք՝ բոլոր յարմարութիւններով: Դպրոցի տեսուչը ինքը՝ Խրիմեանն էր: Այս դպրոցում ուսանելու էին գալիս հայ երիտասարդներ Կ. Պոլսից, Պարսկաստանից, Կովկասից: Այստեղ կարճ ժամանակով դասաւանդում է նաեւ Րաֆֆին, որը նաեւ թղթակցում էր «Արծուի Վասպուրականին»:*

*Իր սկսած գործը աւելի լայն թափով առաջ տանելու համար 1860 թ. Յունուարին Մ. Խրիմեանը Վանի հոգեւոր առաջնորդ Իգնատիոս Թոքմաջեանի, Գարեգին Սրուանձտեանցի եւ այլոց հետ ուղեւորւում է Արեւելեան Հայաստան եւ Անդրկովկասի հայաբնակ վայրերը: Էջմիածնում Ամենայն Հայոց կաթողիկոս Մաթեւոս Ջուխաջեանը նրան արտօնում է ազգօգուտ հանգանակութիւններ կատարել: Յայտնուելով Թիֆլիսում, որտեղ լաւ ընդունելութեան է արժանանում թիֆլիսահայերի եւ Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Հասան Պալալեանի կողմից, վարդապետը հանդիպումներ է ունենում տեղի հայ մեծահարուստների հետ, քարոզներ կարդում հայկական եկեղեցիներում: Նրա հայրենասիրական խօսքը մեծ ոգեւորութիւն է առաջացնում հայկական շրջաններում, նրան լսում էին յափշտակուած: Ցաւօք, Մ. Խրիմեանի հայրենաշունչ, համարձակ ելոյթները առաջ են բերում ցարական իշխանաւորների եւ որոշ հոգեւորականների դժգոհութիւնը: Նրանք սկսում են չարամիտ զրպարտանքներ տարածել նրա մասին եւ հասնում այն բանին, որ կաթողիկոս Մ. Ջուխաջեանը պահանջում է նրա շտապ վերադարձը Էջմիածին...*

*1862 թ. Մ. Խրիմեանը դարձաւ Տարօնի հոգեւոր առաջնորդը եւ Ս. Կարապետ վանքի վանահայրը: Նա մօտ վեց տարի վարեց այդ պաշտօնը, շրջեց Տարօնի գիւղերը, ծանօթացաւ ժողովրդի վիճակին եւ այդ մասին մի քանի տեղեկագիր ուղարկեց պատրիարքարան եւ Ազգային ժողով: Տարօնում նա նոյնպէս հիմնեց տպարան եւ հրատարակեց «Արծուիկ Տարօնոյ» թերթը, որի խմբագիրը Գ. Սրուանձտեանցն էր: Ինչպէս Վասպուրականում, այնպէս էլ Տարօնում Մ. Խրիմեանի եւ Գ. Սրուանձտեանցի հայրենանուէր գործունէութիւնը ոմանք սուիններով ընդունեցին, նա նոյնիսկ մեղադրուեց հակապետական գործունէութեան մէջ, ինչը դրդեց թուրք պաշտօնեաներին երկուսին էլ վտարել Տարօնից: 1868 թ. Խրիմեանը դարձեալ Կ. Պոլսում էր, ուր եւ Հոկտեմբերին ձեռնադրւում է եպիսկոպոս: Մէկ տարի անց Ազգային ժողովը նրան ընտրեց պատրիարք:*

*Որպէս պատրիարք նրա առաջին գործերից մէկն այն եղաւ, որ բոլոր ենթակայ թեմերին շրջաբերականներ ուղարկեց՝ պահանջելով կրթել, դաստիարակել ժողովրդին եւ վերջ տալ երկպառակութեանը: Դրանից յետոյ Արեւմտահայաստանի հայաշատ գաւառներից դէպի պատրիարքարան սկսեց հոսել նամակների ու զեկուցագրերի իսկական մի հեղեղ, որտեղ ներկայացւում էր ժողովրդի անտանելի ծանր վիճակը, խնդրելով Հայրիկի օգնութիւնը: Այդ բոլոր նամակները նա կարդում էր, քննում բոլոր նիւթերը եւ արդիւնքները ներկայացնում Բարձր դուռ:*

*Սակայն դրանից արեւմտահայութեան տնտեսական կեանքում ոչինչ չփոխուեց: Մ. Խրիմեանը գիտակցում էր, որ իր ժողովրդի նկատմամբ Օսմանեան Թուրքիայի վարած քաղաքականութեան պայմաններում չեն կարող լուծուել շատ հարցեր, եւ որ ինքն անզօր է մեղմելու իր մարդկանց ցաւը: Այդ պատճառով 1873 թ. նա հրաժարուեց պատրիարքական աթոռից, սակայն մնաց Կ. Պոլսում:*

*1877-78 թթ. Պալքանեան պատերազմից յետոյ Կ. Պոլսի հայ ղեկավար շրջանները Պեռլինի կոնգրես ուղարկեցին ազգային պատուիրակութիւն՝ Մ. Խրիմեանի ղեկավարութեամբ: Կոնգրեսի օրակարգում էր նաեւ Հայկական հարցը:*

*Սակայն պատուիրակութեանը թոյլ չտրուեց մասնակցել կոնգրեսի աշխատանքներին: Աւելին, պատերազմից յետոյ արեւմտահայութիւնը ապրեց աւելի ծանր օրեր: 1879 թ. երաշտին յաջորդած սովը ընդգրկեց Վասպուրականի ողջ ազգաբնակչութեանը, եւ երբ Խրիմեանը նոյն թուականի վերջերին դարձաւ Վանի հոգեւոր առաջնորդը, անմիջապէս լծուեց ժողովրդին սովից փրկելու գործին, կազմակերպեց պայքար հիւանդութիւնների դէմ: Այդ նպատակով նա Վան հրաւիրեց բժիշկներ Յովսէփ Շիշմանեանին (Ծերենց) եւ Միհրան Վարդանեանին: Հոգեւոր առաջնորդի հայրենասիրական գործունէութեամբ ոգեւորուած՝ Վանի հայ երիտասարդութիւնը 1880 թ. վերջերին հանդէս էր գալիս կառավարութեան դէմ զինուած ապստամբութեան բացայայտ կոչերով: Այդ նպատակով Վանում ստեղծուեց «Սեւ խաչ» գաղտնի կազմակերպութիւնը: Լուրեր տարածուեցին, թէ այս կազմակերպութեան ստեղծման նախաձեռնողներից մէկն էլ Մ. Խրիմեանն է: Այս լուրերը շուտով հասնում են թրքական կառավարութեանը, որի հրամանով նա հեռացւում է իր ծննդավայրից, ապա աքսորւում Երուսաղէմ:*

*1890 թ. Ապրիլին հայութիւնը նշում էր Մ. Խրիմեանի ծննդեան 70-ամեակը: Նրա ժողովրդականութիւնը գնալով աճում էր, եւ 1892 թ. Մայիսին նա ընտրւում է Ամենայն հայոց կաթողիկոս:*

*Կովկասում բնակուող հայերը, չնայած ցարական Ռուսաստանի խտրական քաղաքականութեանը, համեմատաբար ապահով էին: Խրիմեան Հայրիկի ջանքերի շնորհիւ աւելացել էր հայ եկեղեցիներին կից ծխական դպրոցների քանակը, կազմակերպուել էին մի շարք բարեգործական եւ մշակութային ընկերութիւններ: Սրանք իրենց գործունէութիւնը տարածում էին՝ օգտուելով հայկական եկեղեցիներին ընձեռուած հնարաւորութիւններից, որոնց օրինականութիւնը ճանաչել էր ցարական կառավարութիւնը դեռեւս 1836 թ.: Խրիմեան Հայրիկի լայնածաւալ ազգապահպան գործունէութիւնն աննկատ չմնաց ցարական իշխանաւորների տեսադաշտից, որոնք այստեղ վտանգ էին տեսնում վարչակարգի նկատմամբ: Եւ ահա Կովկասի փոխարքայ Գոլիցինը գաղտնի զեկոյց է ուղարկում ցարին, թէ հակառուսական շարժումները Կովկասում հովանաւորւում է հայոց եկեղեցին:*

***Շար.ը էջ 18***

**Armenian Cilicia Evangelical Church**
**Հայ Կիլիկիա Աւետարանական Եկեղեցի**



Will Commemorate the **97th** anniversary of the
**Armenian Genocide**
By presenting

**AGHET / ԱՂԷՏ**

**FULL VIDEO PRESENTATION in English**

"Aghet: Nation Murder", is a documentary made by German filmmaker Eric Friedler, that compellingly proves the absolute truth of the genocide of the Armenian people.

Using the actual words of 23 German, American and other nationals who witnessed the events, and armed with archival materials, his film expertly takes on the challenge that the Turkish PM Erdogan hurled at the world by stating: "Prove it."



Execution of Armenians in Constantinopole June 1915

**Friday, April 13, 2012 7:00 p.m.**

Armenian Cilicia Evangelical Church
339 South Santa Anita
Pasadena, CA 91107
(626) 405 9195


MISSION
Wine & Spirits
Southern California's Premier Wine & Spirits Superstore
3 LOCATIONS TO SERVE YOU
GLENDALE
825 W. Glenoaks Blvd., Glendale, CA 91202
(818) 242-0683 • Mon-Sat. 9AM-8PM • Sunday 10AM - 4PM
PASADENA
1785 E Washington Blvd., Pasadena, CA 91104
(626) 794-7026 • Mon-Sat. 9AM - 8PM
SHERMAN OAKS
13654 Burbank Blvd., Sherman Oaks, CA 91401
(818) 785-6529 • Mon-Sat. 9AM - 8PM
SVEDKA Vodka 1.75L 12 99
Ketel One VODKA 16 99
JOHNNIE WALKER Black Label 21 99
BLACK VELVET Whisky 1.75L 8 99
GREY GOOSE VODKA 20 99
CLUNY Scotch Whisky 1.75L 15 99
CORZO Silver Tequila 29 99
TEQUILA Don Julio Añejo 37 99
1800 TEQUILA Reposado 15 99
HANGAR ONE Vodka 23 99
RÉMY MARTIN 1738 Cognac 39 99
SKYY VODKA 1.75L 18 99
Hennessy COGNAC VS 21 99
BAILEYS Irish Cream 12 99
TEQUILA GRILLOS Reposado 17 99
Sauza TEQUILA HORNITOS Reposado 15 99
COUPON 10 99 ABSOLUT VODKA 750ml LIMIT (3)
MUST PRESENT COUPON. LIMIT ONE (1) COUPON PER CUSTOMER PER STORE VISIT. LIMIT THREE (3) BOTTLES. EXPIRES 04/12/12
COUPON 26 99 ARMENAC ARMENIAN BRANDY 750ml LIMIT (3)
MUST PRESENT COUPON. LIMIT ONE (1) COUPON PER CUSTOMER PER STORE VISIT. LIMIT THREE (3) BOTTLES. EXPIRES 04/12/12
COUPON 16 99 TSAR ALEXANDER II VODKA 750ml LIMIT (3)
MUST PRESENT COUPON. LIMIT ONE (1) COUPON PER CUSTOMER PER STORE VISIT. LIMIT THREE (3) BOTTLES. EXPIRES 04/12/12
COUPON 26 99 REMY MARTIN VSOP 750ml LIMIT (3)
MUST PRESENT COUPON. LIMIT ONE (1) COUPON PER CUSTOMER PER STORE VISIT. LIMIT THREE (3) BOTTLES. EXPIRES 04/12/12
*This ad expires on 04/12/12 • We reserve the right to limit quantities • Sales tax excluded • Prices subject to change without notice.
• Ad prices may remain in effect longer than the time period indicated • All items are 750ml in size unless specified.

# ԵՒՍ ՄԷԿ ԲԱՑԱՅԱՅՏՈՒՄ ԿԱՐՄԻՐ ԲԼՈՒՐԻ ՍՏԵՂԾՈՒԱԾԻՑ

**ԱՇՈՏ ԹՈՐՈՍԵԱՆ**

Բնական բարձրութիւնները Հայաստան լեռնաշխարհի հնագոյն բնակիչների համար, լաւագոյն վայրերն էին պաշտպանական ամրութիւններ կառուցելու համար: Թէյշեբաինի՝ Կարմիր Բլուր քաղաք ամրոցը (այդ անունը նա ստացել է տարածքի կարմիր գոյնի կաւահողի պատճառով) դրա վառ ապացոյցն է, որը կառուցուել է մեր թուարկութիւնից առաջ 7րդ դարի առաջին կէսին Ուրարտական թագաւոր Ռուսա Բ.ի կողմից, Ուրարտու պետութեան հիւսիսային սահմանները Կիմմերական եւ Սկիւթական քոչուոր ցեղերի արշաւանքներից պաշտպանելու եւ այն առաւելի անխոցելի դարձնելու նպատակով:

Թէյշեբաինի, Կարմիր Բլուր քաղաք ամրոցը իր վարչատնտեսական եւ ռազմական նոր կենտրոնով կառուցուել է Հրազդան գետի (Նախկինում կոչուել է Իլդարունի» ձախ ափին, ներկայիս Երեւան քաղաքի տարածքում:

Թէյշեբաինի, Կարմիր Բլուր քաղաք ամրոցը շրջապատուած է եղել հզօր պաշտպանական պատերով ներսում եղել են թագաւորի պալատը սիւնազարդ դահլիճով եւ մեծ քանակութեամբ տնտեսական կառոյցներ, արհեստանոցներ, քնչութի իւղ եւ գարեջրի արտադրութեան շինութիւններ: Մեծտեղ են գրաւել գինու ստացմանը եւ պահպանութեանը յատկացուած մառանները-տարածքները: Ամրոցը ունեցել է ջրամատակարարման համակարգ, որը սնուել է Հրազդան գետից, գաղտնի ճանապարհով քարէ խողովակների միջոցով, որոնց մնացորդները գտնւում են Էրեբունի թանգարանում:

Թէյշեբաինի երբեմնի գոյութիւնը վկայող առաջին գտածոն յայտնաբերուել է 1936 թուին: Թէյշեբաինի անուանումը առաջին անգամ կարդացել են ամրոցի մառանների երկաթեայ փականների վրայ, որտեղից պարզ է դարձել տուեալ շրջանի Ուրարտական ծագումը: Հնավայրի կանոնաւոր ուսումնասիրութիւնները լոյս աշխարհ բերին շուրջ 2500 տարուց աւելի կարմիր հողի տակ հաստ շերտով ծածկուած բնակատեղին: Կարմիր բլուրից յայտնաբերուած նիւթերը համարւում են Միջին Ասիայի Մերձաւոր Արեւելքի եւ Փոքր Ասիայի հնագիտական ժառանգութեան համար կարեւոր գտածոներ:

Կաւից, ոսկորից, քարից եւ տարբեր մետաղներից պատրաստուած կենցաղային եւ պաշտամունքային իրերը, զանազան տեսակի զարդերը, գործիքները, առասպելական կենդանիների խորհրդանիշներով պատկերազարդուած զէնքերը, գինու կարասները իրենց հզօր տարողութիւններով վկայում են Ուրարտական զարգացած կենցաղի, արուեստի եւ արհեստների մասին:

Բոլոր Ուրարտական քաղաքները ունեցել են գինու պահպանման եւ արտադրութեան հզօր մառանները: Միայն Թէյշեբաինի քաղաք-ամրոցում գտնուել են 500ից աւելի կարասներ, իւրաքանչիւրը 250ից մինչեւ 1250 լիտր տարողութեամբ: Տնտեսութեան բազմաթիւ ճիւղերի կողքին Ուրարտացիների համար, յատկապէս Թէյշեբաինում խաղողագործութիւնը եւ գինու արտադրութիւնը եղել է ամենազարգացած ճիւղերից մէկը:

Կարմիր Բլուրի Թէյշեբաինի մանրամասն ուսումնասիրութեամբ զբաղուել են բազմաթիւ աշխարհահռչակ գիտնականներ: Բ. պիոտրովսկին Ն. Յարութիւնեանը, Ի. Օրբելին, Ա. Գէորգեանը եւ այլոք: Դժբախտաբար պեղումներից եւ ուսումնասիրութիւններից յետոյ անյայտ պատճառներով շատ գտածոներ եւ թանկարժէք իրեր այսօր գտնւում են ամենատարբեր թանգարաններում եւ անհատ մարդկանց հաւաքածոներում:

Տարիներ շարունակ Կարմիր Բլուրից յայտնաբերուած գտածոներով, նրանց կիրառութիւն ուսումնասիրութիւններով զբաղուել եւ այսօր էլ զբաղւում են մետաղների գեղարուեստական մշակման 40 տարուայ վաստակ ունեցող Մամիկոն Մխիթարեանը եւ նրա կինը՝ նկարչուհի Պայծառ Աւետիսեանը, որը վաստակաշատ մասնագէտ է հին հայկական խալիների պատմութեան եւ գործելակերպի:

Վարպետ Մամիկոնի եւ նրա կնոջ աշխատանքային գործունէութեան մասին տարիներ առաջ, հայկական կենտրոնական հեռուստատեսութեան կողմից, նրանց տանը Երեւանում նկարուել է ակնարկ, որը բազմաթիւ անգամներ ցուցադրուել է 3-1 ով եւ Լոս Անճելըսի Հորիզոն հեռուստակայանով:

Վարպետ մամիկոնը ունի որոշակի հաւաքածու արծաթից, պղնձից եւ պրոնզից տուեալ դարաշրջանի ոգով պատրաստուած-կառուցուած գործեր, այսօր էլ նա ապրելով Միացեալ Նահանգներում շարունակում է իր պրպտումները գտածոների վերականգնման ճանապարհին: Լինելով իր գործի մետաղների գեղարուեստական մշակման անմնացորդ նուիրեալը, վարպետ Մամիկոնը ամէն օր եւ ամէն ժամ իր համար նոր բացայայտումներ է կատարում: Ուսումնասիրելով եւ անալիզի ենթարկելով Կարմիր Բլուրից՝ Թէյշեբաինից գտնուած 500-ից աւելի գինու կարասների առկայութիւնը, վարպետ Մամիկոնը անում է հետեւեալ եզրակացութիւնը, օրինակ, որպէսզի այդ կարասները լցուէին գինով, որը կազմում է 400 հազար լիտրից աւելի, պէտք էր ունենալ հազարաւոր հեկտար խաղողի այգիներ, իսկ այդ այգիներից հաւաքուած խաղողից ստացուած գինու պահեստաւորումից յետոյ, մնացած ոչ պիտանի ճզմուած խաղողի ողկոյզները՝ «ճեճը» ի՞նչ պիտի անէին խաղողագործները, պարզէ որ չէին թափի եւ կը գտնուէին տուեալ դարաշրջանի պաշտամունքներին նուիրեալ վարպետներ, կը ստեղծէին սարքեր գինու պահեստաւորումից յետոյ մնացած մի քանի տասնեակ հազար քիլոկրամ խաղողի ճեճից թունդ յարգի խմիչք »ցքի» պատրաստելու համար:

Ուրարտական շրջանի հազարաւոր սեպագիր արձանագրութիւններ վկայում են այն մասին, որ գինին եւ թունդ խմիչքը «ցքին» եղել են խնճոյքների եւ տօնակատարութիւնների ամենացանկալի վայելքների մէկը, ինչպէս նաեւ գինին եւ թունդ խմիչքները եղել են տուրքերի եւ հարկերի կարեւորագոյն բաղադրիչները:

Վարպետ Մամիկոնը իր երկար տարիների ուսումնասիրութիւնների եւ հետազօտութիւնների ընթացում համադրելով թանգարաններում պահուող գինու եւ թունդ խմիչքի ստացման ժամանակ տարբեր ծիսական սարքերի մնացորդները կարողացել է ստեղծել եւ ներկայացնել այն սարքստեղծագործութիւնը, որով գտնւում է որ մօտ 2500-3000 տարի առաջ մեր նախնիները կարողացել են ստանալ թունդ խմիչք «ցքի»: Ցաւօք սրտի շատ հնաբաններ այդ գտածոներին որոնք յաճախ արուած են մեծ արուեստով, անուանում են կրակարաններ, ատրուշաններ ծիսական նպատակներով օգտագործման համար եւ համարւում են նրանց որպէս հեթանոսական կամ նախահեթանոսական շրջանի ծիսական իրեր:

Չնայած որ վարպետ Մամիկոնի շատ ստեղծագործութիւն աշխատանքներ տարբեր առիթներով ցուցադրուել են հանրութեանը եւ մասնագէտներին, բայց մինչեւ օրս նրանց նկատմամբ լուրջ վերաբերմունք չի ցուցաբերուել:

Վարպետ Մամիկոնի այս վերջին աշխատանք-ստեղծագործութիւնը, ըստ հեղինակի ենթադրութեան մի սարք է, որը ստեղծուած է պեղումներից յայտնաբերուած նմանատիպ սարքի առանձին բեկորների համադրութեան եւ լրացման միջոցով ու ենթադրւում է, որ այդ սարքի մէջ լցնելով գինու պատրաստումից յետոյ մնացած ճեճը, փակելով կափարիչը եւ սարքի տակ այրելով դանդաղ կրակը, սարքի մէջ կ'առաջանայ այն թունդ խմիչքը ցքին գոլորշու ձեւով, որը կաթսայի վրայ գտնուող վեց հրէշների բերանից կը սկսի կաթել տարաների մէջ:

Եւս կարծում եմ որ այս սարքի ցուցադրումը եւ նրա մասին բարձրաձայնելը այսօր խիստ կարեւորէ եւ եւս մի լուրջ փորձ Թէյշեբաինի Կարմիր Բլուրի գաղտնիքների բացայայտման գործում: Ուստի մետաղների գեղարուեստական մշակման վաստակաշատ վարպետ Մամիկոն Մխիթարեանին ցանկանում են առողջութիւն եւ իր աշխատանքներում նորանոր նուաճումներ:





«ՔԱՋ ՆԱԶԱՐ» ՌԱԴԻՈ ԵԹԵՐ ՇՕ
Ամէն Կիրակի երեկոյեան
ժամը 10:00-ից 12:30
Կլէնտէյլի 380-րդ կայանից



## ՄԱՀՈՒԱՆ ԽԱՅԹՈՑԷՆ ԶԵՐԾ ՄՆԱՑ ԱԶԳԻՍ ՅԱՒԵՐԺՈՒԹԻՒՆԸ

*Շարունակուած էջ 1-էն*

Գ-ի գիւտը: Այդ նորարար գիւտը կոթողեց հայու ինքնութեան պահպանման խարիսխները, որոնք զինք դարձուցին յաւերժական եւ անսասան, մշտական վերապրում ու վերականգնում շնորհելով իրեն: Հայ ժողովուրդի մէջ Քրիստոնէական ջերմեռանդ հաւատքը յաւերժական ներշնչարանը դարձաւ, որ միշտ իրեն աւիշեց նոր կորով ու հաւատք իր ապագայ կեանքին հանդէպ, երեւոյթ՝ որ մեծամեծ մտքերու մեկնաբանութեամբ թարգմանուեցան «Փիւնիկի Յարութեամբ»:

Աւարայրեան խորը հիասթափութիւնն ու անդարմանելի պարտութիւնը, նոյնպէս, մօտ տասնամեակ մը ետք Նուարսակի յաղթական դաշնագրի վերածող հայ ժողովուրդը կը պարտէր իր հոգեւոր ներշնչումին ու աննահանջ քրիստոնէական հաւատքին: Ան հարկադրեց պարսիկ կայսրութեան, որ վերանայի հայ ժողովուրդի դէմ գործադրած, իր հաւատքը ուրանալու կայսերական պարտադրանքին եւ կրակապաշտութիւնը ընդունելու հրամայականին: Նուարսարկեան դաշնագրով՝ Հայաստան աշխարհ ազատ կը կացուցուէր իր կրօնքը ուրանալու պարտաւորութենէ եւ պահելու իր հոգեւոր կեանքը եւ քրիստոնէական պաշտամունքի ազատութիւնը, իր հայրենիքէն ներս:

Հոգեւոր կեանքի ուժեղ ներշնչումն էր, այնուամենայնիւ, կեանքին կառչած մնալու եւ ապրելու անտեղիտալի կամքը, Օսմանեան Կայսրութեան՝ հայ ժողովուրդի դէմ իրագործած Ցեղասպանութեան անմոռանալի տարիներուն: Հայը կը մերժէր յուսահատիլ: Հայը կը հաւատար իր ազգին անկործնելիութեան եւ լինելիութեան: Կը հաւատար իր ազգին յաղթական ապագային: Այդ էր պատճառը, որ հայ մայրը աւճորի անապատներու աւազին վրայ գրելով, իր զաւակներուն մեսրոպեան տառերը կ'ուսուցանէր: Այսօր, Ցեղասպանութեան զոհերուն յաւերժական կոչին, ապրելու կամքին եւ գոյութեան պահպանման փարումին ժառանգորդ հաւատարիմ եւ հաւատաւոր սերունդները, «իմացեալ մահով» յաղթանակեցին մահուան ու վերստին յարութիւն տուին տակաւ շիջող իրենց զոյգ հայրենիքներ՝ Հայաստանի նորանկախ հանրապետութեան եւ հերոսական Արցախին, որոնք անվիճելի զոյգ երաշխիքները կը հանդիսանան նոր նուաճումներու, մեր ազգի դարաւոր երազներու նուիրագործման ճանապարհին:

Այս հաւատքով բարձրաձայն կ'ողջունենք մեր ժողովուրդը՝ Քրիստոսի փառապանծ Յարութեան տօնին առիթով, եւ կը պատգամենք՝ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց, Օրհնեալ է Յարութիւնը Քրիստոսի»:

## ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՆՐԱՆ ԿՈՉԵՑ ՀԱՅՐԻԿ

*Շարունակուած էջ 13-էն*

*Այդ գաղտնի զեկուցագրի պատասխանը իրեն երկար սպասել չտուեց:*

*1903 թ. Յունիսի 12-ին ցարը ստորագրում է մի հրամանագիր, որով նախատեսւում է բռնագրաւել հայ ազգային եկեղեցական գոյքն ու կալուածքները: Հարուածը ամէնից առաջ ուղղուած էր հայկական դպրոցների դէմ, որոնց մեծ մասը գոյատեւում էր եկեղեցու նպաստներով եւ կալուածքներից ստացուած եկամուտներով: Սա հայ ժողովրդի ռուսացման փորձ էր, որի հեղինակը ցարիզմն էր:*

*Եւ 84-ամեայ ծերունազարդ վեհափառը ընդդիմացաւ բռնապետութեանը: Նա մի շարք կոնդակներով հրամայեց Էջմիածնի Սինոդին եւ թեմական առաջնորդներին ոչ մի մասնակցութիւն չունենալ առգրաւման գործին: Կտրականապէս մերժեց յանձնել եկեղեցական գոյքերը: Այնուամենայնիւ, ցարական իշխանութիւնները բռնագրաւեցին վանքապատկան կալուածքներն ու եկեղեցական գոյքը: Ոչ մի վանահայր, վարդապետ կամ եպիսկոպոս մասնակցութիւն չունեցաւ այդ ամէնին, չյանձնեց ոչ մի բանալի...*

*Երեւանում, Ալեքսանդրապոլում, Էջմիածնում, Ախալքալաքում կազմակերպուեցին բազմահազարանոց ցոյցեր եւ միտինգներ ընդդէմ ցարի հրամանագրի, իսկ Գանձակում եւ Պաքւում տեղի ունեցան արիւնալի բախումներ հայերի եւ ոստիկանութեան միջեւ, որի հետեւանքով եղան վիրաւորներ եւ սպանուածներ: Ժամանակի ռուս առաջադէմ մտաւորականները նոյնպէս դատապարտեցին այդ հրամանագիրը:*

*1905 թ. ռուսական յեղափոխական շարժումներից երկիւղած Նիկոլայ 2-րդըստիպուած էր ընկրկել: 1905 թ. Օգոստոսի 1-ին նա ստորագրեց հայ եկեղեցական գոյքը վերադարձնելու հրամանագիրը, որի շնորհիւ վերաբացուեցին հայկական դպրոցները:*

*1906 թ. Օգոստոսի 15-ին Էջմիածնում գումարուեց հայ քաղաքական կուսակցութիւնների ընդհանուր ժողով՝ մշակելու ազգային մարտավարութեան խնդիրները: Երկու շաբաթ տեւեց այդ ժողովը: Ժողովի բացմանը ներկայ էր նաեւ արդէն ծանր հիւանդ 86-ամեայ Հայրիկը: Նա եկել էր արտասանելու իր վերջին ճառը, սակայն կարողացաւ ընդամէնը մի քանի բառ ասել եւ տնքալով հեռացաւ երկու սպասաւորների թեւերին կռթնած:*

*Տեսարանը ցնցող էր եւ ազդեցիկ: Խորապէս յուզուած այդ տեսարանից՝ ժողովի մասնակիցները կանգնեցին եւ ճանապարհեցին նրան «կեցցէ Հայրիկը» բացականչութիւններով:*

*Շատ չանցած՝ նոյն տարուայ Հոկտեմբերի 29-ին, վեհափառը վախճանուեց, կեանքից հեռացաւ Ամենայն Հայոց Հայրիկը, որի կեանքն անմնացորդ նուիրում էր հայրենիքին եւ ժողովրդին:*

*Ամէն տարի Ապրիլի 4-ին՝ Խրիմեան Հայրիկի ծննդեան օրը, Ս. Էջմիածնի մայրավանքի բակում գտնուող գերեզմանի մօտ կատարւում է հոգեհանգստեան արարողութիւն: Վեհափառ հայրապետի եւ հոգեւոր բարձր դասի մասնակցութեամբ: Ամենամեայ աւանդական այդ արարողութեանը այս տարի եւս ներկայ են լինելու «Վանվասպուրական» հայրենակցական ՀԿ անդամները:*

## ՀՀ ՍՓԻՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐ ՀՐԱՆՈՅՇ ՅԱԿՈԲԵԱՆ

*Շարունակուած էջ 5-էն*

*կում է, որ մեր պետութեան տնտեսական, սոցիալական, մշակութային եւ քաղաքական կեանքում պէտք է մեծ դերակատարութիւն ունենան նաեւ սփիւռքահայերը: Սահմանադրութեան բարեփոխումներից յետոյ՝ 2005-ին մենք հիմք դրեցինք երկքաղաքացիութեան ինստիտուտին: Դա նշանակում է, որ ցանկացած սփիւռքահայ կարող է դառնալ ՀՀ քաղաքացի: Հետեւաբար նա կարող է ակտիւօրէն մասնակցել երկրի քաղաքական կեանքին: Եւ մեր խօսակցութիւնները երկպալատանի խորհրդարան ունենալու կամ մեր այսօր գործող Ազգային ժողովում նաեւ սփիւռքահայութեանը որոշակի տեղեր յատկացնելու մասին, շատ իրատեսական են, որովհետեւ խօսքը վերաբերում է Հայաստանի Հանրապետութեան քաղաքացի դարձած մարդկանց: Այն սփիւռքահայերը, ովքեր ցանկութիւն չունեն դառնալ մեր երկրի քաղաքացի, նաեւ ցանկութիւն չպիտի ունենան մասնակցելու մեր քաղաքական կեանքին: Այստեղ հարցը հիմնականում ժամկէտին է վերաբերում: Սահմանադրութեամբ նախատեսուած է, որ խորհրդարանի անդամ կարող են դառնալ այն քաղաքացիները, ովքեր հինգ տարի ՀՀ քաղաքացի են եւ հինգ տարի ապրել են այստեղ: Ահա այս նորմերն են, որ խանգարում են սփիւռքահային միանգամից մասնակցել մեր ընտրական գործընթացներին: Բայց 2017 թ. ընտրութիւններին սփիւռքահայերը կարող են մասնակցել՝ որպէս պատգամաւորների թեկնածուներ եւ նոր մտածողութիւն, արեւմտեան գաղափարներ, մօտեցումներ բերել հայոց խորհրդարան:*

Tert.am

## ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ «ՍԻՓԱՆ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲ

*Շարունակուած էջ 7-էն*

*ու նոր բոլոր անդամներուն, անցած տասնամեակներու ընթացքին անոնց ցուցաբերած նուիրական ծառայութեան համար: Նմանապէս շնորհակալութիւն յայտնեց սոյն միջոցառումի կազմակերպիչներուն, նուիրատուներուն եւ հովանաւորներուն, մասնաւորաբար «Տաղլեան Մշակութային Կեդրոնի» տիրոջ Տիար Պետրոս Տաղլեանին, որ սիրայօժար յանձն առած էր սրահի բոլոր ծախսերը:*

*Յայտագրի պաշտօնական բաժինէն ետք տեղի ունեցաւ պարահանդէս-խրախճանք: Ներկաները հայկական եւ եւրոպական պարեղանակներու զուարթ հնչիւններու ներքեւ իսկապէս ապրեցան ուրախ եւ յիշատակելի պահեր:*

*Ուրախութեամբ կ'իմանանք որ Հենրիկ Անասեան Հայաստանի մշակոյթի եւ սփիւռքի նախարարութիւններէն հրաւէր ստացած է ներկայ գտնուելու Երեւանի մէջ կայանալիք իր յոբելինական հանդիսութեան:*

*Բարի երթ, քաջառողջութիւն եւ նորանոր յաջողութիւններ սիրելի մաեսթրոյին:*

*Գ. Մ.*

### ԽՆԴԱԿՑՈՒԹԻՒՆ

*Ուրախութեամբ կ'իմանանք թէ Տէր եւ Տիկ. Սարգիս Աջապահեան բախտաւորուած են առջինեկ երկուորեակ զաւակներով (մանչ եւ աղջիկ): «Մասիս» իր խնդակցութիւնը կը յայտնէ նորածին երեխաներուն, անոնց ծնողներուն, Խպոյեան եւ Աջապահեան ընտանիքներուն ու համայն պարագաներուն, մասնաւորաբար՝ Նազարէթ Աջապահեանին:*

### ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն
գիրքեր, եւ կը ցանկաք զանոնք նուիրել
Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝
հաճեցէք կապ պահել մեզի հետ:
G.Y.O. 1060 N. ALLEN AVE.
PASADENA, CA 91104

REQUEST FOR PROPOSALS
RFP 7560, RFP 7562 AND RFP 7561

The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified agencies interested in the following opportunities:

RFP 7560 Project Based Voucher (PBV)
(Issue 3-26-2012; Due 4-24-2012)
To provide Permanent Supportive Housing under the Project Based Voucher Program.

***

RFP 7562 Section 8 Tenant Based Supportive Housing
(Issue 3-26-2012; Due 4-24-2012)
To provide Section 8 Tenant Based Supportive Housing Program services.

***

RFP 7561 Interpretation & Translation Language Service
(Issue 4-9-2012; Due 5-10-2012)
To provide translation and interpretation services.

Copies of the RFP's may be obtained via www.hacla.org/ps or call (213) 252-5405 or 252-1832.

4/5, 4/12/12
CNS-2284393#
MASSIS WEEKLY

## ՄԱՀԱԶԴ



ԱՆԺԷԼ ՃԷՐԷՃԵԱՆ
1921–2012

Խոր ցաւով կը գուժենք մեր մօր, մեծ մօր, քրոջ՝ ԱՆԺԵԼ ՃԷՐԷՃԵԱՆԻ մահը, որ պատահեցաւ Ուրբաթ 30 Մարտ, 2012–ին, Պէյրութ Լիբանան, յետ կարճատեւ հիւանդութեան:

Սգակիրներ՝

Որդին՝ Տէր եւ Տիկ. Տիրան եւ Մարգրիտ Ճէրէճեան

Դուստրը՝ Տէր եւ Տիկ. Հատի եւ Էլիզապէթ Սուհէյլ

Թոռները՝ Տէր եւ Տիկ. Ակսել եւ Փաթրիք Գուզազ

Լոռա Սուհէյտ

Տէր եւ Տիկ. Վիգէն եւ Անժելա Խպոյեան

Տէր եւ Տիկ. Էտի եւ Գլարա Գոնիալեան

Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Անիթա Թիւթիւնճեան

Քոյրը՝ Ատրինէ Կիտուրեան եւ զաւակներ

Եղբօր զաւակներ՝ Արսէն եւ Մարալ Կիտուրեան, Զարիկ եւ Սարգիս Գրիգորեան

Եղբօր կինը՝ Վիքթորիա Կիտուրեան եւ զաւակներ՝ Վանիկ, Վարուժան եւ Իվանա

Ներերը՝ Տիկ. Արժօն Ճէրէճեան, Տիկ. Վերժին Ճէրէճեան

Տէր եւ Տիկ. Զարեհ եւ Էլիզապէթ Ճէրէճեան եւ զաւակունք

Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Շողեր Ճէրէճեան եւ զաւաքունք

Տէր եւ Տիկ. Ժորա եւ Ատէլ Ճէրէճեան եւ զաւակունք

Եւ համայն Ճէրէճեան, Կիտուրեան, Գրիգորեան, Քրմոյեան, Պօղոսեան եւ Խոտանեան ընտանիքներ:

Յուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ Երկուշաբթի, Ապրիլ 2–ին Պէյրութի Ս. Նշան եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համուտի Ազգ. գերեզմանատունը:

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Ընկերուհի ԱՆԺԷԼ ՃԷՐԷՃԵԱՆԻ (ԿՈՒԺՈՒՆԻ) մահուան տխուր առիթով Ս.Դ Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինը եւ յարակից կառոյցները իրենց խորազգաց վշտակցութիւնները կը յայտնեն վաստակաշատ կրթական մշակի ընտանեկան բոլոր պարագաներուն, մասնաւորաբար՝ Տէր եւ Տիկ. Ընկեր Տիրան եւ Մարգրիտ Ճէրէճեաններին:

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ԱՆԺԷԼ ՃԷՐԷՃԵԱՆԻ մահուան տխուր առիթով Հ.Կ.Բ.Մ.ի Վարչութիւնն ու համակրական շրջանակը իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի զաւակներուն, Ճէրէճեան եւ Կիտուրեան ընտանիքներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Տիրան եւ Մարգրիտ Ճէրէճեանին ու համայն պարագաներուն:

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ԱՐՈՒՍԵԱԿ ՍԻՆԱՆԵԱՆԻ մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ. Սահակ եւ Անահիտ Գթըֆեան իրենց խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի բոլոր պարագաներուն, յատկապէս Տէր եւ Տիկ. Կէրի եւ Սիւզաննա Սինանեանին:

Առ այդ $100 տոլար կը նուիրեն «Մասիս»ին:

## ՇՈՒՆՉԻ ԳԱՐՇԱՀՈՏՈՒԹԻՒՆԸ

Շարունակուած էջ 17–էն

flux), որկորային քաղցկեղ, անմարսողութիւն, շատակերութիւն, ալքոհոլի չափազանց գործածութիւն. այս բոլորին պատճառով գարշահոտութիւնը աւելի զգալի կ'ըլլայ կրթալու պարագային:

10) Այլ պատճառներ եւ հիւանդութիւններ՝

ա) Լեարդի երկարատեւ բորբոքում եւ ձախողութիւն–փճա–ցում (liver cirrhosis). այս պարագային արտադրուած հոտը մկնահոտ կը կոչուի:

բ) Երիկամներու երկարատեւ հիւանդութիւն եւ ձախողութիւնփճացում (uremia). այս պարագային արտադրուած հոտը մէզի հոտի կը նմանի:

գ) Չափազանց յառաջացած շաքարախտ, որուն պատճառով թոքերու մէջ ասիթոնի (acetone) հոտ կ'արտադրուի:

## ԲԻՒՐ ՅԱՐԳԱՆՔ ԱՆԺԷԼ ՃԷՐԷՃԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Շարունակուած էջ 1–էն

ժէյ ամոլը կը բախտաւորուին երկու զաւակներով՝ Էլիզապէթ եւ Տիրան, որոնք իրենց ծնողները կ'ուրախացնեն հինգ թոռներով՝ Անժէլա, Գլարա, Անիթա, Փաթրիք եւ Լոռա, որոնք, իրենց կարգին ծնունդ կու տան չորս ծոռներու՝ Ալեքին, Ալինային, Գալինին եւ Անթոնիին:

Անժէլ Կուժունի, շնորհիւ իր արաբերէն լեզուի գիտութեան, հանդիսացաւ Լիբանանի Կրթական Նախարարութեան կողմէ ընդունուած առաջին արաբերէն լեզուի հայ ուսուցչուհին, որ տասնամեակներ ծառայեց մեր ազգային կրթական հաստատութիւններէն ներս: Անժէլ, շնորհիւ իր ուսումնական եւ լեզուական գիտելիքներուն՝ իր գնահատելի ներդրումը բերաւ նոր սերունդներու հոգեմտաւոր զարգացման բնագաւառէն ներս:

Ինչպէս նկատել տուինք իր մանկա–պատանեկան աճման եւ երիտասարդական ուսումնական տարիներուն, հօրենական Հնչակեան կուսակցութեան գաղափարախօսութեամբ խմորուած օճախէն ներս տիրող՝ ազգային, մշակութային, ընկերային եւ հայրենասիրական հայեցի մթնոլորտը, իր մէջ սերմանած էր ազգին ու հայրենիքին ծառայելու առողջ հունտերը: Անոնք, յետագային, զարգացում արձանագրեցին իր ամուսնական կեանքի պայմաններուն մէջ: Ան զօրավիգ կանգնեցաւ իր հնչակեան կուսակցապետ ամուսնոյն՝ Յարութիւն Կուժունիի ազգային–հասարակական նուիրական առաքելութեան, որմէ անմասն չմնաց խանդավառ Անժէլ:

Իր կողակիցի, մայրական ու ուսուցչական ասպարէզային օրինակելի պարտականութիւններուն կատարման կողքին՝ Անժէլ անձնապէս, ինքեւս ներգրաւուեցաւ ազգային, մշակութային ընկերային եւ եկեղեցասիրաց այլաբնոյթ ծառայութիւններու մէջ, ատենապետելով նաեւ տիկնանց շատ մը միութիւններու վարչական մարմիններուն: Ան դրապէս արձագանգեց բոլոր անոնց, որոնք կարիքն ունեցան իր խորհուրդներուն, գործակցութեան ու գործնական օժանդակութեան: Ան գործեց սիրով, նուիրաբերումով, հաւատքով, նպատակասլացութեամբ, որովհետեւ հաւատաց իր ազգին, հայրենիքին, մարդկային վսեմ արժէքներուն:

Անշուշտ կեանքի տարիները ունէին իրենց խօսքը:

Անժէլի մարմինը սկսաւ տակաւ տկարանալ ինչ որ զինք դատապարտեց անկողնոյ, կարճատեւ հիւանդութեամբ, որ իր պարագային, յառաջացած տարիքն էր պատճառը:

Անժէլ, շրջապատուած իր զաւակներով, թոռներով եւ հարազատներով, մահկանացուն կնքեց ընթացիկ տարուան Մարտ ամսուան 30–ին, իր ետին թողած իր ջերմ յիշատակներով լեցուած զաւակներ, թոռներ, ծոռներ, գաղափարապաշտ գործակիցներ եւ բարեկամական լայն շրջանակ:

Յիշատակդ վառ եւ հողը թեթեւ գայ վրադ՝ սիրելի Անժէլ:

## ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑԻ ՆՈՐԱՅԱՅՏ ԱՆՏԻՊ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ

Շարունակուած էջ 14–էն

Խանջեանը, Սահակ Տէր Գաբրիէլեանը: Ամատունու հետ երկխօսութիւնը չկայացաւ եւ աւարտուեց ողբերգութեամբ...

«Ֆրոյդիստական առակ (կամ պոէմ անառակ «հանճարների» մասին)» երկին յաջորդում է եւ մի վերնագիր՝ «Զգուշացում», գրել է 1936–ի յունիսի 1–ին: Ամբողջ գործը ծաղր ու ծանակ է Վահրամ Ալազանի եւ գրական շրջանակներում շրջագայող նրա կնոջ՝ Մարոյի հասցէին: Ալազանին Չարենցը բազմիցս ծաղրել է իր էպիգրամներում, որովհետեւ գրական բարձր պաշտօններ վարող այդ գործիչը շատ հեռու էր բարձր գրականութեան զգացողութիւնից: Այդ իսկ պատճառով նրան համարում էր գրական «խարազան», մէկը, ով ուզում էր Չարենցին «զսպել»: Այս պոէմը եւ նշուած էպիգրամները պէտք է դիտել միասնութեան մէջ՝ որպէս ժամանակի գրական բարքերի երգիծանք ու քննադատութիւն:

«Լերան աղօթքը» պոէմի երկու տարբերակ տպագրուել է «Անտիպ եւ չհաւաքուած երկեր» գրքում (1983): Բայց այստեղ գտնուող տարբերակը ինքնուրոյն միաւոր է եւ լրացնում է իր ծննդեան 40 եւ գրական գործունէութեան 25–ամեակների շուրջ Չարենցի ունեցած դառը խոհերն ու անյոյս մտորումները:

«Գովք Հայկազեան Մելպոմենէի ամենափայլուն աստղին՝ Արուսին», «Տանթէական սէր», «Արուսին–մենակ», «Արուսին» պոէմները գրել է 1936–ի յունիսին, հիմնականում յունիսի 12–14–ին: Արուս Ոսկանեանը (1889–1943) ծնուել էր Պոլսում, Խորհրդային Հայաստանում հաստատուելուց յետոյ, յատկապէս 1930–ական թթ., նա հասաւ իր փառքի գագաթնակէտին: Կատարում էր Սոֆոկլեսի, Շէյքսփիրի, Իբսենի, Գորկու, Ա. Օստրովսկու, Պոգոդինի, Պարոնեանի, Շիրվանզադէի, Դեմիրճեանի, պանանի եւ շատ այլ հեղինակների թատերգութիւնների գլխաւոր հերոսուհիների դերերը: 1935–ին նա արժանացաւ ՀԽՍՀ ժողովրդական արտիստի կոչման: 1934 թ. դեկտեմբերի 30–ին նա մասնակցել է Երեւանի պետական համալսարանի ուսանողութեան ու դասախօսական կազմի հետ Չարենցի հանդիպմանը եւ հանդէս եկել դահլիճը ցնցող ոգեշունչ ասմունքով:

Չարենցը մտերիմ էր նրա հետ: «Գովք...»ի վերնագրից վերեւ գրել է «Սեւագրութիւն» բառը: Պոէմը Արուս Ոսկանեանի փառաբանութիւնն է՝ որպէս հմայիչ դերասանուհի, որի անունը Չարենցը շրջանակում է թատերական աշխարհի այնպիսի նշանաւոր դէմքերով, որպիսիք են՝ Պետրոս Ադամեանը, Սիրանոյշը եւ Ազնիւ Հրաչեան: Պոէմն աւարտւում է այսպիսի տողերով.

Եւ Զարենցի քնարով՝
Ցնծութեան գուսան,–
Փառք է ահա քեզ երգում
Նայիրեան Մուսան...

(Շարունակելի)

www.massispost.com

USC Institute of Armenian Studies
Leadership Council

*Seventh Anniversary Gala Banquet*
*in honor of the*

USC Shoah Foundation Institute
for Visual History and Education

*for championing the*

Armenian Genocide Digitization Project

USC
University of Southern California



SUNDAY, APRIL 15, 2012
RECEPTION 5:30 PM
DINNER 6:30 PM

THE BEVERLY HILTON
INTERNATIONAL BALLROOM
9876 WILSHIRE BOULEVARD
BEVERLY HILLS, CALIFORNIA 90210

FOR INFORMATION CONTACT
ELIZABETH AGBABIAN (310) 476-5306 • DIANE CABRALOFF (562) 943-1081
ALICE CHAKRIAN (818) 388-6734 • LORI MUNCHERIAN (310) 936-4758
SAVEY TUFENKIAN (818) 956-8455

DON'T LET THEIR VOICES BE FORGOTTEN.

USCDornsife
Dana and David Dornsife
College of Letters, Arts and Sciences